



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15933

321.9
9-45



15 JAN 2010

№ 34

«Յանոց»-ի գրադարան

№ 34

Ա. ԶԵՐԵՈՎ

ԴԱՍԱԿԱՐԳՎԱՅԻՆ ԿՈՒԻ

ԹԷՇՈՐԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

ԹԱՐԳԱՄ. Մ. ՅԱՐ.

Գիմն է 10 կող.

Թ. Խ. Ժ. Խ. Ա
1907

26 SEP 2006

№ 34

«Յառաջ»-ի գրադարան

№ 34

321.9
9-45

Վ. ԶԵՐՆՈՎ

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԾԻՒ

ԹԵՂՈՐԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

ԹԱՐԳԱՄ. Մ. ՅԱՐ.

Թ. Ի. Ֆ. Լ. Ի. Ս.
1907

17.07.2013

75933

1. Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ւ

Ար հասարակութիւնը չի հանդիսանում մի միավագաղ և
միասեռ ամբողջութիւն—զա ակնյայտնի փաստ է, որը ամեն
մէկի աշքովն է ընկնում, ով գլուխ միայն խորհել հասարակա-
կան կեանքի հարցերի մասին։ Եւ ի հարկէ այս փաստը չէր կա-
րող աննկատելի անցնել ոչ միայն վերջին ժամանակի պատմա-
րանների համար, այլ և նախորդ դարերի։ Բայց փաստը նկատե-
լը զեռ ամենեին չէ նշանակում նրա նշանակութիւնը հասկանալ։
Այս մարդկային հասարակութիւնը բաժանում է կաստաների,
գասերի, գասակարգերի։ Որ նրանց վիճակը, բարքերը, սովորութ-
ները, հայեացքները զանազան են։ Որ նրանց մէջ յաճախ երևան
է գալիս երբեմն ծածուկ, երբեմն բացայայտ հակամարտութիւն,
որը երբեմն աճում է մինչեւ քաղաքացիական պատերազմի չափերը—
այս ամենը շատ անգամ շատ պատմաբաններ նշանակել են։ Բայց
գրանից զեռ շատ հեռու էր մինչև այս, որ այս հակամարտու-
թիւնը ճանաչւեր ևս՝ մարդկութեան պատմական պրօցէսը
շարժող գլխաւոր զսպանակներից մէկը կարելի էր, օ-
րինակ, զաւակարգային հակամարտութեան մէջ տեսնել հիւն-
գոտ սիմվոլներ, որոնք նկատում են, երբ հասարակութիւնը
շեղւում է իր զարգացման նօրմալ շաւղից։ Բայց այսպիսով դա-
սակարգային կույը, զասակարգային ընդհարումները զրկում էին
որևէ է դրական, ստեղծագործող պատմական գերից։ Նրանց նշա-
նակութիւնը պիտի լինէր միայն զուտ բացասական, միենոյն ժա-
մանակ կատարելապէս մակերեսութական, զուտ սիմվոլմատիկ։
պատմութեան կենսական նեարդը, նրա հիմնական հունը ընկած
կը լինէր այս երկոյթներից մի կողմը, և վերջիններս կը հաւա-
սարւէին—երբ այս հայեացքը ծայրայեղ կերպով զարգանար մի
ինչ որ բանի, անձեւ աղբակոյաների պէս, որոնց պատմական
հեղեղատի հոսանքը դուրս է պցում և թողնում է տփերին։

Խ Ֆ Ֆ Լ Ի Զ

Հիմնական սպառություն ՀՀ ԳԱԱ Ակադեմիա Վագարշական փողոց, № 5.

1907

(234)



21892-589

ՀՀ ՀՀ

Ճանաչել գասակարգային կուի երեսյթների մէջ պէտքերի հիմնական բովանդակութիւնը և միաժամանակ՝ դէպքերի զլիսաւոր, եթէ ոչ միակ, շարժիչը, նրանց վրայ ճամապատասխան ուշադրութիւն դարձնել և պատամական հիտաղօտութեան մէջ նրանց պատշին շարքը քաշել—դա արդէն մի ամբողջ յեղաշրջումն էր պատամական դիտութեան մէջ:

Եւ այս յեղաշրջումը կատարեցին, ըստ բաւական տարածւած հայեացքի, Մարքսը և Էնգելսը: Ինչպէս ասում է, օրինակ՝ Վիլհելմ Բլուսը իր գրքում «Die Deutsche Revolution 1848—1849», — «Հրապարակւեց մը բոլորին նոր, այսպէս կոչւած, պատմութեան մատերիալիստական ըմբռնողութիւն, որով համաշխարհային պատութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ միայն գասակարգային կուի մի շարք միջնադէպէր»:

Այդպիսի հայեացքների տարածւելուն որոշ առիթ տևել է ինքը էնգելսը, որը մի անգամ յայտարարեց («Կօմմուն. Կուսակցութեան Մանիֆեստ»-ի առաջարանում), որպէս թէ պատմութիւնը դասակարգային կուի հիմնական գրութիւններով բացարկելը հանդիսանում է «միայն բացառապէս Մարքսի սեփականութիւնը»: Բայց այսպիսի չափազանցութիւնը, որը թելազրւած էր դէպի հանգույալ բարեկամը ունեցած խորին պատկառանքից, հեշտ է ուղղել, նկատի առնելով նոյն էնգելսի ուրիշ կարծիքները, որոնք այս դէպքում վկայում են նէսց նրա դէմ: Այսպէս «Էլուդիդ Ֆօյէրբախի» մասին բրոշիւրում էնգելսը նկատում է, որ «1815 թւից Անգլիայում ոչ ոքի համար այլիս գաղտնիք չէր, որ այս երկրում ամբողջ քաղաքական կուի ծանրութեան կենտրոնը հանդիսանում էր երկու դասակարգերի ճգնաւումը դէպի տիրապետութիւն, այն է մի կողմէյ երկրագործական արիստօրատիայի (landed aristocracy) և միւս կողմէյ բուրժուազիայի (middle classe): Ֆրանսիայում Բուրյութեան մէջ էր մտել: Այս ժամանակւայ պատմաբանները, Տիեզրից մինչև Գիլօն, Մինիէն և Տիեզրը, շարունակ մատնանիշ են մութիւնը հասկանալու համար, սկսած միջն դարերից: Իսկ 1830 թւից սկսած երկու երկրներում էլ բանուր զառակարգը, թիւն ձեռք բերելու համար»:

Նոյն այս հարցն է շօշափում և Անտօնիո Լաբրիոլան իւրմի ուսւածքի մէջ, որ նւիրուած է «Կօմմ. Կուս. Մանիֆեստի յիշատակին», և նրա ցուցմունքները կարող են իրեն որոշ լրացումներ ծառայել ին գէլսի ցուցմունքներին: Լաբրիոլան առանձնապէս շիշտում է Սէն Սիմօնի և Օգիւստիէն Տիերիի նշանակութիւնը, իրեն պատմաբանների, որոնք հասկանում և բաց էին անում իրենց ժամանակի անցքերի գասակարգային աստառը: «Ներկայ դարիս առաջին կիսում, մանաւանդ 1830-ից մինչև 1850 ժամանակաշրջանում,—ասում է Լաբրիոլան,—միջդասակարգային ընդհարումները... աճում էին, կամանշի երկու կողմերումն էլ ընդունում էին շարունակ մեծացող չափեր, աչքի էին ընկում աւելի և աւելի ակնյայտնի կերպով։ Այս փաստը աւելի և աւելի պարզորէն արտացոլում էր զանազան կուսակցութիւնների գիտակցութեան և ծրագրների մէջ, ինչպէս «Ճախակողմեան», նոյնպէս և «աչակողմեան», Գիլօնից մինչև Լուի Բլան և նոյնիսկ Կարէ: Այս փաստը վերջապէս իր արտացոլումը դատամինչև անգամ գեղեցիկ գրականութեան մէջ, Բալզակի վէպէրում, որին Լաբրիոլան համարում է «գասակարգային հոգեբանութեան» խսկական գիւտանուղը, գեղարւեստական ստեղծագործողը: Այսպիսով ամեն բան նախապատրաստած էր նոր թէօրիայի երկան գալու համար: «Պատմութեան իրական բովանդակութիւնը տեղափոխել դէպի հասարակական դասակարգերը և միջդասակարգային շփումները, տեղափոխել դէպի նրանց զարգացումը պատմական պրօցէսի ծանրութեան կենտրոնը—այդ ուղղութեամբ արդէն որոնումներ և գիւտեր էին արւում... Մնում էր ճիշտ և որոշ տէրժիններով ճեակերպել այս բոլոր երևոյթների թէօրիան»:»

Այսպիսով Մարքսի և էնգելսի համապտտասխան գործերը հանդիսանում էին միայն իրեն վերջարանութիւնն մի ամբողջ ընդգրածակ մտաւոր հոսանքի, որը բռնել էլ ինչպէս ծայրայեղ, նոյնպէս և չափաւոր Փրակցիաներին: Մարդ կարող է այդ հոսանքի սագմերին հետամուտ լինել մինչև պատմութեան հեռու խորքերը: Էնգելսի հետ վարած իր բանակուի մէջ Աքիլ Լօրիան (որը սակայն առանձին դէպէրում կանգ չի առնում բռնազրօսութիւնների առաջ) տալիս է հեղինակների մի շատ երկար շարք, որոնց միջով անցը-

¹⁾ Essais sur la conception matérialist de l'histoire par Antonio Labriola. Paris 1897, եր. 96—97.

նում է մտքի այդ հոսանքը,—ոկտած Հարբինգտոնից (1656 թ.) շարունակելով մինչև Դաւինան, Մօնականիո, Հերցիլրդ, Փիդիօկրատինիրը, Աղամ Սմիտը և վերջացրած Մալինարիով—աջ կողմից և Պրուդոնով ու Մարքսով—ձախ կողմից: Բանակուի տրամադրութիւն չունեցող և առասարակ աւելի դզոյշ բէնէդէտու կրօզէն թէկ առանձին նշանակութիւն չի տալիս այդպիսի հետախուզութիւններին, սակայն իր կողմից մատնացոյց է անում գասակարգային թէօրիայի կարեոր սաղմերը դեռ թոժաս Մօրուսի մօտ, իսկ Մարքսի մօտաւոր նախորդներից նա ուշադրութիւն է դարձնում դէպքերի դասակարգային աստանի առանձնապէտ փայլուն պատկերացման վրայ Լորէնց Շտայնի մօտ:

Բայց աւելի ևս հետաքրքիր պատմական զուգադրութիւններ են արել սօցիալիզմի մինչ—մարքսիան ֆրանսիական զրականութեան վերաբերմամբ Շարլ Սնդէրը, իսկ գերմանականի վերաբերմամբ՝ Դաւիդ Կոյգէնը: Առաջինը «կօմմ. կուս. Մանիֆէստին» կցած իր բացատրութիւնների մէջ ցոյց է տւել, որ հակառակ էնգելսին և հակառակ Մարքսի ուրիշ ոգկորւող յարգող ներին, «այն փիլիսոփայութիւնը, որը պատմութեան ամբողջ բովանդակութիւնը վերածում է մի շարք դասակարգային ընդհարութիւնների, ամենակին նոր չէ և կազմում է սօցիալիստական աւանդութիւնների ամենահին բաղկացուցիչ մասերից մէկը»¹⁾: Անդէրը պարզորոշ կերպով երևան է հանում նրա ներկայութիւնը սէնսիմօնիստներից ոմանց մօտ, ֆուրիէրիստների, յեղափոխականների մօտ, որոնք Բարեօփի աւանդութիւններն էին շարունակում, սրանց դադանի ընկերութիւնների (Fédération de Bannis, Société des Saisons), թէօդօր Շուտերի Բաղարի, Բլանկի, Կոնստանտին Պէկերի, Վինդալի և ուրիշների մօտ:

Իսկապէս դեռ Շուտերն էր հասկանում (1835 թ.), որ էցօր աւելի ուժեղ է բացւում երկու դասակարգերի հակառարութիւնը՝ հարուստների, որոնք սպառում են ոչինչ չարտադրելով, և աղքատների, որոնք ամեն բան արտադրելով դուրի են ամեն բանից: «Օրէնքը սրբազործում է և հովանաւորում ուժեղների միութիւնը թոյլերի դէմ—տէրերի միութիւնը բանւորների

¹⁾ Oh. Andler, «Le Man. Com., II, Jnsroducion historique et commentaire, Paris 1901, եր. 64—69.

գէմ.» «Բորսայի և գործարանի ժամանակակից բարօններին» նկարագրելով, Շուտեր նախագուշակում է, որ նրանք պիտի կլանեն մանր ձեռնարկողներին. նրա կարծիքով «միջին դասակարգի գոյութիւնը կողք կողքի ժամանակակից սօցիալական մարմնի կազմւածքի հետ գառնում էանկարելի»: «Կարելի է նախատեսնել, որ վաղ թէ ուշ բանւորների ահազին մեծամասնութիւնը յեղափոխական բոցով կը բռնկվի»: Եւ նրա կարծիքով բռնկումները կարելի է կանիել միայն հիմնական սօցիալական բարեփոխութեամբ, որը պիտի գործակցի միութիւնների զարգացման, ինչպէս յետագայ Լասուալեան «ընկերակցութիւններն էին պետական օգնութեամբ», կամ Լուի-Բլանի ազգային արհեստանոցները»: Սէնսիմօնիստ Բազարը նոյնպէս մատնանիշ էր անում (1829 թ.), որ մարդիկ պատմական զարգացման առաջին աստիճաններից «բաժանւած են երկու դասակարգի—հարստահարածներ և հարստահարողներ, տէրեր և ստրուկներ, պատրիցիներ և պլէբէյներ, սենատորներ և ճորտեր... որ և մարմանում ու տուննապէս աչքի է ընկնում այժմ սեփականատէրերի և բանւորների յարաբերութիւնների մէջ»:

Դ. Կոյգէնը իր ուսումնամասիրութեան մէջ մարքսիզմի նախորդների մասին Գերմանիայում¹⁾ հետեւել պայծառ բաղւածքն է անում Գրիւնից (1844 թ.): «պատմութիւնը մինչև այժմ եղել է ոչ այլ ինչ, եթէ ոչ մի անընդհատ պատերազմ. սա իր էութեամբ մի պատերազմ է եղել բաղդաւորների, սեփականատէրերի, յաղթողների՝ ընդդէմ դժբաղների, զրկւածների, ճնշեածների: Ցունաստանում այս վերջիններս կոչւմ էին ստրուկներ, իօտաներ, Հոօմում²⁾ ստրուկներ, միջին դարերում՝ ճորտեր. Ռուսաստանում սրանք զիւզացի անունն են կրում. Հիւսիսային Ամերիկայում այդ նեղքներն են. իսկ քաղաքակերթւած աշխարհում՝ Սնգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում նրանք կոչւում են պրօկտարներ»:

Թէ ինչքան լայն էին տարածւած այս հայեացքները, ցոյց է տալիս նաև մեր հայրենակից Զերբէզօվի պատմական ակնարկը: Նա ցոյց է տալիս, որ գեռ 1825 թւին տնտեսագէտ Բլանկին, որ սէնսիմօնիզմի խիստ ազգեցութեանն էր ենթարկւած, հետեւել ընդհանուր խորհրդածութիւններն էր անում պատմութեան պրօ-

¹⁾ D. Koigen, «Zur Vorgeschichte des modernen philosophischen Sozialismus in Deutschland», Bern 1901.

ցէսի մասին. «Ես քայլ առ քայլ ճետևել եմ մեծ անցքերը: Եւ միշտ հրապարակի վրայ եղել է երկու կողմ—մարդիկ, որոնք ուղարկում են իրենց աշխատանքով ապրել, և մարդիկ, որոնք ուղարկում են ուրիշների աշխատանքով ապրել... Պատրիցիները և պլէքէյները, սարուկները և ազատ-արձակւածները, վելֆները և հիբէլինները, «սպիտակ» և «կարմիր վարդերը», «կաւալէրները» և «կլորապլուխները», ազատութեան կողմանակիցները և ճորտական-ները—այս բոլորը միայն վարդիցիաներ են, ընդհանուր երկոյթի միայն զանազանատեսակութիւններն են»...

Պակաս բնորոշ չեն Զէրքեզօվի բերած քաղլածքները Ֆուբէրիստ Վիկլոր Կօնսիդէրանի մի գրւածքից—(1847թ.): Սէնսիմօնիստների նման այս վերջինս պրոլէտարներին զիտում էր իրեր հին սարուկների և միջնադարեան ճորտերի պատմական տեսակափոխութիւն: Նոյն իսկ նրա գրքի գլուխների և պրակներին թափանակիցի հայեցակեաի դրօշմ. օրինակ X զլուխը «Հասարակութեան բաժանում երկու դասակարգերի՝ փորձամասնութիւն, որ տէր է ամեն բանի, և մեծամասնութիւն, որ զուրկ է ամեն բանից». Կամ թէ Ա զլուխ 52 ենթավերնազիբերը՝ «բուրժուազիա և պրոլէտարներ»: Ակնարկ գցելով ստրկութեան, ճորտութեան և ֆէոդալիզմի ժամանկաշրջան-ների վրայ, նա բնորոշում է ներկան իրեր փաստ» Փէօդալիզմի արաւոր զարգացման, ֆինանսական արդիւնարերական ֆէօդալիզմի, որն ուղղակի փոխարինում է նախկին արիստոկրատիային նրա դիրքերում, ոչնչացնելով և աղքատ դարձնեշակի ձևակերպում է ժամանակակից գուտ տնտեսական դաստիարակյին բաժանման դանազանութիւնը նախկին կատաների, դաստիարակյին այլ բաժանումներից: «Այժմ այլևս օրէնքը չէ, իրաւունքը գնում ֆրանսիական ժողովրդի խոշոր կաթէգօրիաների միջնօ այլ տնտեսական կազմակերպութիւնը—ինքը սօցիալական կազմակերպութիւնը: Ապա բնորոշելով մեքենայականութեան, արդիւնագործութեան զարգացումը, սեփականութիւնների կենտրոնացնումը, խոշոր կապտալի գերակշռութեան աճումը, Կօնսիդէրանը վերջապէս գալիս է մինչև անգամ այն եզրակացութեան, որ այդ գերակշռութեան զարգացումն ինքը... պիտի վաղ թէ ուշ անհրաժեշտորէն

գեղափոխական կոփւ առաջ բերի սօցիալական հողի վրայ»¹⁾: Գաղտնի յեղափոխական ընկերութիւնների մէջ, որոնք Բարեկամութիւնի աւանդութիւններով ոգենորւած էին, արդէն հրապարակ էր գրւած այն սկզբունքը, որը Մարքսը կնքել է «պրոլէտարիատի գրիկտատուրա» անունով: Հէսց Սociété des Saisons-ում բոլոր արտօնութիւնների ոչնչացման պահանջի, իրաւունչւրի համար գութեան և կրթութեան իրաւունքի, ընդհանուր ընտրողական իրաւունքի, բէֆէրենցումի և այլն պահանջի հետ միաժամանակ մատնանիշ էր արւում: «Բայց որովհետև սօցիալական մարմինը վարակւած է գանգրէնով, ապա ուրեմն գէպի առողջ վիճակը փոխանցնելու համար ժողովուրդը մի առժամանակ կարիք կունենայ յեղափոխական իշխանութիւն հաստատելու»: Չը պէտք է մոռանալ, որ Société des Saisons-ին միացրած էր Bund der Gerechten-ը, որից յետոյ կազմւեց նոյն այն «Կօմմունիստների միութիւնը», որի անունից և որի յանձնարարութեամբ հրապարակւեց «Կօմմունիստական Կուսակցութեան Մանիֆէստը»: Այսպիսով, մարդ կարող է այստեղ ակնյայտնի կերպով հետեւ «Ժողովրդի յեղափոխական իշխանութեան» (rouvoir révolutionnaire du peuple) գաղափարի ժառանգաբար անցնելուն: Այս գաղափարը Մարքսի մօտ միայն նոր բառական արտայայտութիւն ստացաւ, այն է՝ «die Dictatur des Proletariats»: Նրա պատմական արմատները հասնում են մինչև Բարեկամութեան օրերը:

Աւելորդ չի լինի այստեղ դարձեալ մի նկատողութիւն անել: Չպէտք է կարծել, որ իբր թէ Մարքսից առաջ սօցիալիստները բաժաններով հասարակութիւնը երկու հիմնական թշնամի դասակարգերի, որոնց միջև փոխանցական աստիճանները քանի զնում այնքան աւելի ջնջւում են, առանձին դասակարգերի վերաբերմամբ նոյն սխալն էին կրկնում, որը առաջ արւում էր հասարակութեան նկատմամբ, այսինքն այդ դասակարգերը ներկայացնում էին իրենց բոլորովին միատեսակ և միապաղադ: Դա այդպէս չէ: Կ. Գրինը, օրինակ, վճռապէս հետեւեալ միտքն է

¹⁾ W. Tsherkesoff, «Pages of socialist History» p. 57—59. Հեղինակը, անարխիստական ուսմունքի կողմանկից, այնքան տարւում է իր բանակուական վերաբերմունքով գէպի Մարքսը, որ մինչևանգամ նրան մեղադրում է ծայրեալը պաղպատի մէջ (գրական գողութեան) Կօնսիդէրանի զւածքից, որը «կօմմ. Կուսակցութիւնը»:

յայանում. — բոլոր յաղթանակող դասակարգերի մէջ իրենց հերթին կարելի է դարձեալ ճնշւածների կաթէզօրիաներ դանելու կողմից յաղթւած դասակարգի սահմաններում կան կաթէզօրիաներ, որոնք շահագործում են մնացած մասսան, որ աւելի ճնշւած է, բան իրենք. Այսպիսով մէնք զործ ունենք շահագործման զանազան ձևերի, չափազանց բարդ ձևերի հետ:

Մեր թուոցիկ հայեացըը լրիւ չէր լինիլ, եթէ ըլկարգային աստառի գաղափարը չափազանց վաղ է սկսել վրդովիլ առաջւոր ուսւ մարդկանց մտքերը, որոնք իրենց ժամանակաշից եւրոպական գրականութեան շնթացքին տեղեակ էին: Արդէն 1842 թ. Գերցէնը իր մի յօդւածում մի բանի գծերով տալիս է նետեալ պատկերը այն երեսիթի, որը նա անւանում է պատմի բոլոր ժամանակներում նկատելի են երկու հակադիր երեսիթ... Մի սկզբնապատճառով մարդիկ, որոնք որևէ ընդհանուր կապունեն իրար հետ, ձգտում են մի կողմ քաշւել, բացառիկ դիրքընել, մենաշնորհ յափշտակել: Մի այլ սկզբնապատճառով մասները ձգտում են մի կողմ քաշւել, բացառիկ դիրքընել, մենաշնորհը Ամեն մի երկում, ամեն մի ժամանակաշրջանում, ամեն մի շրջանում մասսաների և մենաշնորհի. Վերցնել նրանց աշխատանքի պառը, նրանց ձուլիլ իրենց մէջ, ոչչաշնորհը: Ամեն մի երկում, ամեն մի ժամանակաշրջանում, ամեն մի շրջանում մասսաների և մենաշնորհի. Կափել այլ կերպ է արտայայտում, բայց համբեարութիւններ և նրանց քանդում են, և որ ամենից աւելի տարօրինակն է, այն մասսան, որ երեկ դասապարտում էր համբեարութիւնը, այսօր ինը համբեար է դառնում, և վազը մասսան մի աստիճան աւելի ընդհանուր կերպով կը կանի. և կը ջարդի նրան իր հերթին: Այս բնեականութիւնը մարդկութեան կենսական զարդացման երկութիւններից մէկն է, զարկերակի նման մի երեսիթ, միայն այն զանազանութեամբ, որ զարկերակի ամեն մի հարւածի հետ մարդկութիւնը առաջ է շաղմուում¹⁾:

Ս. Ի. Գերցէնի «Յիշտակարանը» մօտաւորապէս նոյն թւականներին (1842—1844) ցոյց է տալիս, թէ ինչպէս աւելի կօնկանաւանական առջաւագան է առաջին առաջաւագան առջաւագան:

¹⁾ «Дизетанты и поэзия ученыхъ» соч. А. Герцена, т. I, երես 324.

բէտ գծերով պատկերանում էր նրան նոյն հիմնական միտումների մարմնացումը նոր պատմութեան մէջ, — նոյնպէս ցոյց է տալիս, թէ ինչ գրական աղբիւների աղդեցութեան տակ էին կազմուում նրա դատողութիւնները: Բնորոշ է այն հանգամանքը, որ սրանք նոյն պատմական աշխատութիւններն էին, որոնց վրայ մատնապիշ էին անում էնգէլսը և կարրիօլան, իբրև «առաջին ծիծեռնակների» վրայ՝ պատմական գէպը երի դասակարգային աստանը հասկանալու գործում: Գերցէնը իր յիշտակարան ում հատ ու կտոր նկատողութիւններ է անում այն տպաւորութիւնների մասին, որ նրանում մնացել էին լուի Բլանի «Histoire de dix ans» դրւածքը, Սէն-Սիմօնի աշակերտ Օգլւատէն Տիէրրի (որա մասին նա նկատում է, որ նրա աշխատութիւններում պայծառ կերպով արտացոլում են «խճուած ու խառնաշփոթ կերպով բոլոր կափւները և բոլոր հակադրութիւնները ցեղերի, դասերի, վիճակների) Գիզօի, Արման Կարբէլի հեղինակութիւնները, երիտասարդ-հէգէլեանական «Deutschche Jahrbücher»-ի յօդւածները կարգալուց յիտոյ: Ինքը դաստիրակեած Հէգէլեան փիլիսոփայութեան աղդեցութեան տակ, Գերցէնը սակայն արդէն «այդ փիլիսոփայութիւնը շուռ է տալիս զիմիֆայր, կամ աւելի լաւ է ասել, նրա փիլիսական գլխի ուսերի վրայ է կանգնեցնուում» (էնգէլսի արտայայտութիւնը Մարքսի մտսին), յայտարարելով, որ «իւրաքանչիւր էպօլիսի փիլիսոփայութիւնը նոյն էպօլիսի փաստական, պատմական աշխարհն է, մտածողութեան մէջ մտցրած»: Նա ողջունում է երիտասարդ-հէգէլեանների ձախակողմեան յեղափոխական թիւի առաջին փիլիսոփայական փորձերը, ասելով, որ գերմանական փիլիսոփայութիւնը լսարանից կենաք է գուրս գալիս, դառնում է սօցիալական, յեղափոխական մարմին է ուստուում, և հետեւարտ՝ դէպէբէրի աշխարհում ուղղակի գործողութիւն է սկսում», միենոյն ժամանակ այդ գործողութեան համար միայն մի հանգամարհ կայ. — պէտք է հանգամանքներին աղտուութիւն տալ, և նրանց ցուցմունքները ըմբռնելով, նրանց գլուխ անցնել, հպատակւելով նրանց, իրեն հպատակեցնել:

Գերցէնը մատնանիշ է անում ֆէօդալական սիստէմի կատարիալ տիրապետութեան էպօլիսան, երբ մինչեանգամ վերանորոգիչները իրենք գետ ֆէօդալիզմից չէին աղատելու. ներկայիս մէջ նա մատնանիշ է անում միջնադարի կենդանի փշրանքների

գոյութիւնը: Պահպանողականները «օրդաններն են այդ անցեալի, որն իր համար տեղ է փնտրում աշխարհում, որը նրանից բարձրակաղէս հրաժարւել է», միենո՞ն ժամանակ «պահպանողականների հայեացքները համակւած են գիտակցաբար թէ անգիտակցաբար արտօնեալ կաստանների եսականութեամբ և շահամութեամբ»: Նա նկատում է, որ հէնց կրօմէէլի իշխանութիւնը յինուում էր մի դասակարգի պահպանողական շահերի վրայ, այնպէս ինչպէս Լուի Ֆիլիպալի իշխանութիւնը». յիշում է նաև միտապեական իշխանութեան նշանակութեան մասին, իբրև մի արտաքին արմացնող կապ զանազան կողմեր ձգող թշնամի դասակարգերի խիստ որւած կենտրօնախոյս ուժերի համար: «Կարքէլը նկատում է, որ հանրապետութիւնը Անգլիայի համաց անկարելի էր, երբնա դասակարգերի էր բաժանւած. անշուշտ... այդպէս բաժանւած պետութիւնը պիտի նրան միացնող կենտրօն ունենայ-թագաւոր հակառակ դէպքում խուժանապետութիւն կը լինի կամ regime de terreur»—(տէրրօրի ոէժիմ): Եւրոպական զարգացած ազգերի շերտաւորումը նա համեմատում է անզարգացած վիճակի հետ.—«մի դեռ չենք նստել» և ահա մեր «ցածր դասակարգերը չունեն այդ ատելութեան հետեղականութիւնը դէպի իսկապէս թշնամանական բանակը»: Բայց եւրոպայում էլ գետ ևս գրութիւնը գուտ անցողական է, որին մի «բացարութիւն կայ»—դէմօկրատիական կուսակցութեան չը զարգացած լինելն է այդ. իսկ քաղաքական յեղաշխութերը առանց սօցիալականի անհնարին են դարձել: Իսկ միջին դասի թագաւորութիւնը այնուամենայնիւ ֆէօդական սօցիալիզմի շարունակութիւնն էր»... Կամ մի ուրիշ ուեղ. —«դէմօկրատիան անսխստէմ է, սօցիալիզմը՝ հազիւ ծնւած: Վախոտ, երկչոտ, շահասէր և փոփոխական եօւրգօօսիւն (բուրժուազիան) տիրապետել է ամեն բանի»: Տիրապետում է «օսրէնը և նրա պաշտպանած proprietaite-ը» (սեփականատէրը): Այդ սօցիալական դրութեանը համապատասխանում է—Մարքսի բնուով ասած—իդէօլոգիական, կրօնական սրբագրծումն: «Սեփականութիւնը, անշարժ կայը այստեղ, և պարզը այնտեղ, ասանում են: Բայց այժմ մշակները ձեռնարկել են նրանցից մէկը իսկ միւսը վաղուց ժամանակուն է հոգիւնելու էլեկտրոնայի աշխատանքը»:

հաւոր արցունքներից կորուոեալ ոչխարների մասին»¹⁾...

Բոլորովին նոր ժամանակներում Մարքսի նախորդների հարցով՝ պատմութեան մէջ զասակարգային կուի նշանակութիւնը գնահատելու տեսակէտից՝ զբաղւել է պ. Պլեխանովը «Կօմմ. Կուսակցութեան յառաջաբանում»:

Պ. Պլեխանովը չի գլանում Ս.-Սիմօնի, Օգիւտէէն Տիէրիի, Մինիէի և Գիգօի հեղինակութիւններից քաղւածքներ անել և վերջացնում է հետեւել խօսքերով. «Մէնք ամուր հաստատած ենք համարում այն փաստը, որ արդէն բէստաւրացիայի ժամանակ Ս.-Սիմօնը և Գրանսուիական բուրժուազիայի շատ գիտնական ներկայացուցիչներ դասակարգերի կուի մէջ տեսնուում էին նոր ժամանակների ժողովուրդների պատմական զարգացման գլխաւորագոյն զապանակը: Մէնք կարծում էինք, որ այս փաստը հաստատելը օգտակար է, որովհետեւ նա ըստ երեւութիւն անյարտ է մնացել «Կօմմունիստական կուսակցութեան Մանիֆէստի» շատ ըննադատաներին:

Մէնք արդէն տեսանք, որ հէնց Մարքսի առանձնապէս չերմուանդ երկրպագուներն էին, որ հակւած էին նրա գործը իրը «մի բոլորովին նոր բան» գիտելու: Իսկ «քննադատաները» ընդհակառակը հակւած էին ապացուցելու, որ Մարքսի ծառայութիւնները չափազանցրած են, որ նրանից առաջ էլ գիտակցւած և հասկացւած էր շատ բան: Նրանից ինչ նա ասել է: Այս բոլորից յետոյ այն, որ պ. Պլեխանովը կտրուկ կերպով իր Փրօնաը փախում է, որ ընդհակառակը «քննադատաներին» ստիպում է խանդալ այն մարդկանց գերը, որոնք հաւատում են, թէ Մարքսը բոլորը ձեռք է բերել առանց որևէ կողմնակի ազգեցութեան, որի սեփական ներկայութիւնը, —այդ մանեսը հանդիսանում է բաւական բնուրյուն: Բայց այդ մանեսը մի փոքր չափազանց շտապ էր արւած, իսկ այդ իսկ շտապելուց առաջացան մի շաբաթեանը բնաները հետեւելաներն են:

Պ. Պլեխանովը քաղւածքներ է անում Ս.-Սիմօնից, Օ. Տիէրիից, Մինիէից և Գիգօից, որովհետեւ օգտակար է համարում մի

¹⁾ Дневникъ А. И. Герцена. Соч. т. I երես 93, 30, 124, 119, 120, 113, 107, 109, 111, 288:

փաստ հաստատելու, որը «ըստ երևութին շատ քննադատներ անյայտ է մնացել»: Բայց իր «շտապողութիւն» պատճառով նո մոռացել է աւելացնել, որ ինքը ոչ մի նոր բան չէ «հաստատում» այլ միայն քաղաքածքներով պարզում է այն ցուցմունքները, որոնք նրանից առաջ էին արւած, և որ բոլոր այն հեղինակները որոնցից նա քաղաքածքներ է անում, անուն-անուն յիշւած և էնգէլսի և Լաբրիոլայի կողմից իրեն մարդիկ, որոնք Մարքսի առաջ դասակարգային կուռում տեսնում էին «նոր ժամանակի ժողովների պատմական դարգացման զվարարագոյն զսպանակը»:

Պ. Պլեխանովը բերում է էնգէլսի խօսքերը այն մասին, որ պատմութիւնը դասակարգային կուի հիմնական գրութիւններու բացատրելը «պատկանում է միմիայն և բացատակէն Մարքսին» նա այս կետում սրբազում է էնգէլսին և ծիծառում է «քննադատների» վրայ, որոնք «համարեա միշտ» Մարքսին և էնգէլսին չեզ դած սխալներ վերադրելով, «չեն նկատել Մարքսի և էնգէլսի իսկական սխալները»: Բայց նա մոռանում է, որ լիւլիկ Ֆոյեր բախի մասին գրած իր բրոշիւրում կարելի է հէնց նոյն էնգէլսի մօդունել այն սրբազութիւնը, որի մասին պ. Պլեխանովը խօսում է:

Եթէ որ պ. Պլեխանովը այս երկու կետում խուսափէ «շտապողութիւնից», նա երկի աւելի զգոյշ կը լինէր իր մեղադը րանքներում Մարքսի սօցիալիստական քննադատների հասցեին նա կը հասկանալ, որ եթէ ոչ իրենց սեփական աշխատանքներից, ապա ուրեմն հէնց էնգէլսից և Լաբրիոլայից նրանք կիմանային Մարքսի նոյն այն «նախորդների» մասին, որոնցից պ. Պլեխանովը քաղաքածքներ է անում: Իսկ այս բանը հասկանալու նա նոր սխալներ անելուց կը խուսափէր:

Այսպէս նա մեղադրում է իտալացի սօցիալիստ Բէնէլէստ կրօչէին, իրեն Մարքսի նախորդների մասին չըգիտողի: Բայց այս ամբողջ մեղադրանքը հիմնւած է այն բանի վրայ, որ կրօչէ նրանց մասին ոչինչ չէ յիշատակում իր յօդւածներից մէկու որ զետեղած էր Devenir Social-ում¹⁾: Բայց եթէ Պլեխանով ժանօթացած լինէր նոյն հեղինակի²⁾ նախորդ աշխատութիւն

¹⁾ «Essais d'interprétation et de critique de quelques concepts du marxisme». Մատապատճառ է իրեն մի գլուխ «Մատերիալիզմ և տնտեսական քաղաքականություն» մատապատճառ առաջին անգամ՝ հրատարակվել 1900.

²⁾ Տես նոյն պըսում նրա յօդւածը որ առաջին անգամ՝ հրատարակվել 1896 թ.

ներին, տպա ուրեմն կը տեսնէր, որ կրօչէի դէմ մեղադրանք ուղղելու համար նրա աշխատութիւններին ծանօթ չը լինելը բաւական հիմք չէ: Ինչպէս մենք վերել յիշեցինք, կրօչէն լաւ գիտէր Լօրիայի, Լաբրիոլայի և միւսների միջև եղած վէճը Մարքսի նախորդների մասին, ինքը նրանում մասնակցել էր, «պատմամատերիալիստական հայեացքների» օրինակներ էր ցոյց տեսլ զանազան հեղինակների մօմ և գեռ ասում էր, որ «կարող է օրինակների թիւը բաղմապատկել»):

Նոյն շտապողութիւն պատմառով պ. Պլեխանովը բաղեցվ վանդէրվէլի խօսքերը, որ գասակարգային կուի հասկացողութիւնը «առաջին անգամ արձարծւած է իր բոլոր նետեւանքներով «կօմմուն» կուս. Մանիֆէստում, —չի նկատում մեր ընդգծած խօսքերը և եղրակացնելով, որ Վանդէրվէլը ծանօթ չէ մարքսիզմի նախորդների գոյութիւնը, յանդիմանում է նրան. —«խոստավանում ենք, որ մի մարդից, որ գրել է այսպէս ասած, յօթելիանական բրոցիւր «Մանիֆէստի» առիթով, կարելի է պահանջել աւելի ուշադիր վերաբերմունք դէպի իր նիւթը»: Վանդէրվէլը իր կողմից կարող էր պ. Պլեխանովից պահանջել աւելի ուշադիր վերաբերմունք դէպի բերւած քաղաքները:

Այս ամենը արդէն բաւական բնորոշում են պ. Պլեխանովի ընդարձակ յառաջարանը «Մանիֆէստին» կցած, ինչպէս մի ծայրացեղ շտապողական և միտումատոր բան: Միևնույն միտումը հրապարակ է գորիս նաև ուրիշ բանում:

Մանրամասն քաղաքածքներ անելով Մարքսի բուրժուական նախորդներից դասակարգային կուի գնահատութիւն խնդրում պ. Պլեխանովը բոլորվին այլ կերպ է վերաբերել մինչմարքսեան սօցիալիզմի ներկայացուցիչներին: Նա նրանցից համարեա քաղաքածքներ չի անում, այլ բերում է բացառապէս երկու-երեք կտոր, որոնք իսկամ տարածախնուում են մարքսիզմի և դասակարգային թէօրիայի հետ Շնորհիւ դրա պ. Պլեխանովը ամենեին քննադատօրէն չի վերաբերում Մարքս-էնգէլսի խօսքերին «ուտօպիստական սօցիալիզմի» ներկայացուցիչ-

¹⁾ 1896 թ. «De la forme scientifique du matérialisme historique à «Les théories historiques de M. Loria».

²⁾ «Մատերիալիզմ և տնտեսական քաղաքականություն» մատապատճառ առաջին անգամ՝ հրատարակվել 1896.

ների մասին, իբր թէ նրանք «թէկ արդէն տեսնում էին դասակարգերի հակամարտութիւնը, նոյնպէս և կործանիչ տարրերի ազգեցութիւնը հէնց տիրապետող հասարակութեան ներսում»— «բայց նրանք պրօլետարիատի մէջ չէին տեսնում ոչ մի (!) պատմական ինքնուրոյնութիւն, ոչ մի նրան յատուկ քաղաքական շարժում»: Եթէ մենք դիմենք եղուարդ Ֆուքսի «Wilhelm Weitling» կենսագրականին, ապա մենք կրտսենինք, որ «գերմանական ուտոպիական ոօցիալիզմի այս ամենաականաւոր ներկայացուցիչը» գեռ 1841 թւին գրում էր¹⁾).

Մենք էլ, գերմանական բանւորներս, ուզում ենք ներս մտնել պրօդը էսի համար կուողների շարքերը: Մենք էլ ենք ուզում ձայն ունենալ մարդկութեան բարիքին և տառապահքին վերաբերող հարցերի ընդհանուր քննութեան մէջ, որովհետեւ մենք բանւորական բլուզներով և բաճկոններով և բաճկոն մարդիկս, հանդիսանում ենք մարդկանց ամենաարգամաթիւ, օդակիր և ումեղ շարքը Աստծու ամբողջ լայնածաւալ աշխարհում: Մենք էլ ենք ուզում ձայն բարձրացնել մեր բազգաւորութեան և ամբողջ մարդկութեան բազգաւորութեան համար: Թող այսպիսով բոլորը համուշն, որ մենք լաւ ենք հասկանում մեր շահերը և թէն մենք չենք փայլում լատիներէն, յունարէն և այլ խորամանկանիւս արտայատութիւններով, բայց մենք կարող ենք լաւ կերպով և պարզ գերմաներէն լեզով ասել որ կօշիկ սեխմում է մեր ոտքը: Այսո, մենք էլ ենք ուզում մեր ձայնն ունենալ որովհետեւ ահա արդէն տառնիններորդ զարն է, և մենք դեռ չունինք: Մենք էլ ենք ուզում մեր ձայնն ունենալ հասարական կարծիքի մէջ, որ մեզ ճանաչեն, որովհետեւ մինչեւ այժմ իսկապէս մեր մասին ճշմարիտ հասկացողութիւն չեն ունեցել: Մենք էլ ենք ուզում մեր ձայնը բարձրացնել, որ թէթեացնենք մեր ճնշւած սրտերը և որպէսզի մեր արդարացի զանգաները հասնեն իշխանութիւն ունեցողների ականջին:

«Վայտլինգը հասկանում էր անհաշտելի դասակարգային հակասութիւնները,—ասում է Ֆուքսը այս բաղւածքը բերելով.—և փոխանակ ֆրանսիական խաղաղ-մարդասիրական ուսմունքների, փոխանակ մասն միջոցիների քաղաքականութեան, որից խորը զնացող մի պահանջ—ոօցիալական յեղափոխութիւն»:

Բայց եթէ այդպէս է, ապա ուրիմի իրաւացի չէ Զերբե-

1) 1841 թւին Ժընուայում հրատարակուղ «Hilfseruf der deutschen Jugend»-ի հէնց տառջին համարում (քաղում ենք լսու Ֆուքսի): Միենայն հեղինակը բերում է մի քաղաքք Մարքսի մի գրախօսականից (Պարիզեան «Vorwärts»-ում 1884 թ.) Weitling-ի հեղինակութիւնների մասին, որոնք գրախօսը այս ժամանակ անւանում էր «հանճարեղ» (Այն ժամանակ Մարքսը 26 տարեկան էր):

զօքը, որ իբր Մարքսը միայն այլ կերպ պատմում էր, համարեաթէ գրագողանում էր իբր նախորդներից: Եթէ այդպէս է, ապա ուրիմն միանդամայն չի չնջում ամեն մի եղբագիծ «ուտօպիստական» և «գիտական սօցիալիզմի» միջնեւ:

Այսպիսի եղբակացութիւնը չափազանց «շտապողական» և շատ անձիշտ կլինէր:

Եթէ մինչևանդամ դասակարգային կուի թէօրիայի բոլոր գլխաւորագոյն բաղկացացիչ մասերը առանձին-առանձին գտնը-էին մինչ-մարդսեան սօցիալիզմի ներկայացուցիչների մօս, դա կլինէր այնուամենայիւ մի, ինչպէս ասում են, «աւերւած, ցրիւ տւած ապարանք», առանձին տղիւսներ, որոնցից մինչև վերջաւորւած թէօրիական շէնքը գեռ շատ հեռու է: Զէ որ խօսքը հէնց խոր համադրաման մտքի մասին է, որը կապում, միացնում է և դրա չնորինիւ լուսաւորում է նոր լուսով մարդկութեան ամբողջ նախորդ հոգեոր ժամանակութիւնը: Ապացուցել մտածողի միծութիւնը՝ չի նշանակում երկակայել նրան մի ինչ որ տեղից գետին ընկած, ինչպէս deus ex machina: Մենք գեռ չենք խօսում այն մասին, թէ այլ բան է մի միտք արտայացել, և այլ բան՝ այդ ապացուցելու համար ժամանական երեսիթների մի ամբողջ զինապահեաս բերել, ինչպիսին մենք գտնում ենք Մարքսի մօս: Հոգեոր նախորդներ ունենալ, իր ծագումը չը յիշող չըլինել՝ չի նշանակում բնուրոյն չըլինել, իսկ աւելի ևս չի նշանակում զրագող լինել. Զերբէզօվի վերջին մեղագրանքը հոգերանօրէն կարելի է բացատրել միայն այն կուրացութեամբ, որը բղխում է ծայրայեղ-թշնամական, միակողմանի բանակուական վերաբերմոնքից: Ինչ վերաբերում է ուտօպիստական և գիտական սօցիալիզմի միջի եղբագծին, ինարկէ պատմականապէս պիտի այդ եղբագիծը շատ պայցմանական ճանաչել: Սօցիալիստական ուսմունքների պատմութիւնը վկայում է, որ գիտական սօցիալիզմը չի «աշխարհ եկել» ինչ որ տեղից՝ ուտօպիստականին փոխարինելու համար, այլ ուտօպիստական սօցիալիզմից է զարգացել: Այնուամենայիւ ուտօպիստական սօցիալիզմի և գիտական սօցիալիզմի միջի իբրի վերացական տիպերի՝ զանազանութիւնն իր նշանակութիւնը մի մագաչափ անգամ չի կորցնում. Ընդհակառակը, հենց նա ինքը, ոկողութեանից վերացական զանազանութիւնն է, որ հանդիսանում է լուսնեական գործիքներուն փորձարար այն

բանի համար, որ մի կողմից «մեծ ուստօպիստների» և նրանց աշակերտների աշխատութիւններում կարելի լինի զանազանել այն գաղափարական վաստակները, որոնք գիտական սօցիալիզմի թանգարանի համար իրեն մի զանձ են ներկայացնում, իսկ միւս կողմից՝ հէնց Մարքսի ու Էնդելսի աշխատութիւններում, մանաւանդ աւելի կանուխ աշխատութիւններում կարելի լինի զանազանել ուստօպիական տարրերը գրական-գիտականից:

Դրանով իսկ ընդնշմարում է և «գաստակարգային կուփ թէօրիայի» այն կողմերի մաս-մաս քննելու խնդիրը, որոնք հանդիպնում են իրեն մի արժէքաւոր ներմուծութիւն Մարքսի և Էնդելսի կողմից պատմական պրօցէսը հասկանալու գործում:

2. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՀԻՄՔԸ

Այն թոռոցիկ պատմական անդեմութիւնը, որ վերև բերինք, ցոյց է տալիս, որ կապիտալիստական հասարակութեան գաստարգերի շերտաւորւելու փաստը, նրա զանազանութիւնը հին հասարակութեան դասերի շերտաւորումից, վերջապէս ամքող պատմութեան միջով ձգւող դասակարգերի կոխու—այս բոլորը արդէն գիտել էին մի շարք սօցիալիստական և ոչ-սօցիալիստական հեղինակներ մինչև Մարքսը: Բայց սրանից գեռ շատ հեռու էր մինչև դասակարգային կուփ խնդրի իսկապէս գիտական ժշգումը:

Իւրաքանչիւր գիտական մտածողութեան առաջին կանոնը այն է, որ մարդ երբէք չօգտի այնպիսի տէրմիններից, որոնց իմաստը և նշանակութիւնը մնում են բաւականաչափ չը պարզաբանւած: Երբէք յոյս չըդնել այն բանի վրայ, որ տէրմինը «ընդհանուր գործածական է», այլ իւրաքանչիւր անդամ ճիշտ կերպով պէտք է բաց անհել նրա ներքին բովանդակութիւնը: Հէնց ամենից յաճախ գործածական տէրմինները սովորաբար իրենց մէջ ունեն ամենից աւելի երերուն և անորոշ գէպիցից գէպից կամացականորէն փոխուղ բովանդակութիւն: Դժւար չէ հասկանալ, թէ

ինչ խառնաշփոթութեան աղբիւր կարող է գառնալ դրա շնորհիւ յիշեալ կանոնը չը պահպաննելը: Այս խառնաշփոթութիւնը բընուրոց է գուենիկ մտածողութեան համար, որն աւելի խօսքերով է գործ տեսնում, քան հասկացողութիւններով: որն իր տէրմինութիւնը գիտական իրեն չի հապատակեցնում, այլ կատարելապէս հպատակւած է նրա քաօսական խաղին:

Մինչ-մարքսեան սօցիալիզմը հազիւ էր պատահում, որ բաւական բարձր ենէր գուենիկ մտածողութեան աւանդութիւններից գաստակարգային կուփ խնդրում: Յաճախակի խճճելով գաստակարգերի, գասերի և կաստաների միջն, ոչ պակաս յաճախ նախճանում էր և այն հարցում, թէ որտեղ են վերջանում գաստակարգերի զանազանութիւնները, և որտեղ են սկսում նւազ կարսոր գանազանութիւնները միենոյն դասակարգի շերտերի միջև: Ընդհանուր առմամբ գերակշում էր սկզբնական, բաւական կոպիտ և աչքաչափային զանազանումը «զրկւածների» և «արտօնեաների», «հարուստների» և «աղքատների», «ճնշւածների» և «ճնշողների»: Որոշ նպատակների համար այս զանազանումը և անհրաժեշտ էր, և բաւարար, բայց միայն նրանով եօլա զնալ իր վերլուծութեան մէջ հեռու չը գնալ, նշանակում էր չափազանց քիչ լոյս մտցնել սօցիալական յարաբերութիւնների գորդեան հանդոյցի մէջ:

Ամենախոշոր փորձերը՝ աւելի որոշակի սահմանել սօցիալական գաստակարգերի զանազանութիւնները՝ հանդիսանում են կուփ Բլանի և Լորէնց ֆոն Շտայնի փորձերը:

Կուփ Բլանի իր «Տաս տարւոյ պատմութեան» մէջ բնորոշել է «բուրժուազիան կամ միջին դասը» իրեն «այն քաղաքացիների գումար, որոնք ունեն աշխատանքի գործիքներ և կապիտալ, աշխատում են իրենց սեփական միջոցներով և այդ պատճառով միայն որոշ աստիճան կախւած են ուրիշներից»: Միւս կողմից «ժողովուրդ» ասելով (գրքի միւս տեղերում նա գործ է ածում «բանւորներ» տէրմինը) նա հասկանում է «քաղաքացիների գումար, որոնք ոչ մի կապիտալ չունեն և այդ պատճառով կատարելապէս կախումն ունեն միւսներից, մինչևնագամ ամենատարրական կենսական պահանջների տեսակէտից»¹⁾:

¹⁾) Քաղում ենք առաջին գերմանական թարգմանութիւնից «Geschichte der zehn Jahren von 1830—1840», Zürich und Winterthur 1843, s. 5:

Նրա գանհազանման հիմքում, այսպիսով, դրւած են երկու յատկանիշներ.—յարաբերութիւնը դէպի արտադրութեան միջոցները կամ կապիտալը և ուրիշներից կախումի աստիճանը: Այս դասակարգաւորման պակասութիւններն ակներեւ են: Առաջին յատկանիշը կորցնում է իր ամբողջ որոշութիւնը շնորհիւ կոպիտ սխալի, որով Լուի Բլանը նոյնացնում է «արտադրութեան միջոցները» և «կապիտալը», և այսպիսով ազատ գիւղացին, որն իր արդիւնքի մի մասը ծախում է և կամ նոյն իսկ ապրում է բնական տնտեսութեան «պայմաններում և իր սեփական միջոցներով է աշխատում», նոյնառում է արդիւնաբերող - կապիտալիստի հետ: Իսկ ինչ վերաբերում է երկրորդ յատկանիշին՝ «կախումին» կամ մինչևանգամ «կախման աստիճանին», ապա նրա ծայրայեղ անորոշութիւնը աչքի է խփում: Պործարանատէրը որոշ մտքով նոյնպէս կատարելապէս «կախւած է» բանւորներից. եթէ նա բանւորների կողմից լիակատար բօյկօտի ենթարկւի, նըրան կը մնայ միայն՝ իբրև գործարանատիրոջ իր գոյութիւնը զագարեցնել: «Կախումը» հասարակական կեանքում հազարաւոր բազմատեսակ ձևեր ունի: Օրինակ, արտադրութեան իւրաքանչիւր առանձին ձիւղի ներկայացուցիչը որոշ մտքով «կախւած է» ուրիշներից. իսկ բանւորն արդէն ուրիշ մտքով «կախւած է» գործառուից, բնակարան վարձողը մի այլ նոր մտքով տնատիրոջից և այլն:

Այս տեսակետից աւելի շատ բան չի տալիս նաև Լ. Փօն Շտայնի գիրքը «Geschichte des sozialismus u. Kommunismus des heutigen Frankreichs». Ճիշտ է, նրանում կարելի է գտնել ժամանակակից արդիւնաբերական պրոլէտարիատի գերազանց բնորոշումը, մանաւանդ համեմատած նախկին պատմական ժամանակաշրջաններից ցածր, չունեոք զասակարգելի հետ. շատ շեշտակի նկատողութիւններ զասակարգային հակամարտութեան հոգեբանական աստաղի, ծագման և զարգացման պրօցէսի մասին: Իսկ այն հարցում, թէ ինչն է իսկապէս և ինչու է հիմք ծառայում հասարակութիւնը զասակարգելի բաժանման, նա Լուի Բլանից հեռու չի գնում: «Բուրժուազիայի» մէջ, նրա կարծիքով, «մարմանում է սեփականութեան զաղագիարը». պրոլէտարիատը «ոչ մի սեփականութիւն չունի, այլ միայն աշխատանքի ուժ և ցանկութիւն այդ կիրառելու»: Պրոլէտարը սեփականատիրոջ մէջ իր

թշնամուն է տեսնում, նախ որովհետեւ «իրեն նրանից ստորին է զգում» և, համեմատած «բարձր կանգնածների հետ», նկատում է «անհամապատասխանութիւնը իր ծախսած եռանդի և նրա հետևանքների միջև»¹⁾: Ահա թէ ինչու ժամանակակից պրոլէտարիատը «ինքնարինակ» եւրոպական տարր է, որը սօցիալական շարժման համար հող է կազմում: Շտայնը բացի գրանից պարզորէն սահմանաբաժանում է ժամանակակից «զասակարգերը» նախնական «դասերից» (սակայն մենք այդ տեսունք արդէն վկիտու կօնսիդէրանի մօտ): «Ինչպէս սակայն դարի վերջում, ասում չ նա, ժողովրդի մի դասը յուզուում էր պետութեան դէմ, այնպէս այժմ նրա զասակարգերից մինի մաքերը ուղղւած են դէպի յեղաշրջում հասարակութեան մէջ»: Այստեղից էլ խոստովանութիւն, որ զուտ քաղաքական յեղափոխութիւնների ժամանակն անցել է, վրայ է հասնում սօցիալական յեղափոխութիւնների ժամանակը²⁾:

Մարքսի մի քանի քննազատները, սակայն, պնդում են, որ նա էլ մեզ ոչ մի քայլ առաջ չէ շարժել հասարակական գասակարգերի բնութիւնը հասկանալում: Այսպէս, օրինակ, Զօմբարտն իր վերջին աշխատութեան մէջ արհամարհներով է խօսում զանազան «գրքաղղ», անցանող փորձերից մասին հասարակութեան գասակարգային շինածքի էութիւնը թափանցելու համար, այդ թւի մէջ մտցնելով և մարքսեանը: «Վերջ ի վերջոյ, եթէ Յարքսի հետ միասին գունազուրկ անենք սօցիալական գասակարգերի միջինակասութիւնը, յանգեցնելով այդ «կարձ ասած» խօսքի օգնութեամբ «ճնշողների և ճնշւածների» միջին հակասութեանը, դա կը լինի «կատարելապէս և բոլորովին սխալ»: Եւ ոչ թէ սխալ, այլ և բաւական անբովանդակ գիտական մտքով, որովհետեւ դրանով «գեռութիւնը չի ասւած սօցիալական զասակարգի էութեան մասին (über die Wesenheit»³⁾:

1) Այս վերջին յատկանիշը միակ նորն է, համեմատած Լուի Բլանի գանհազարման հիմքի հետ: Դժւար չէ սակայն տեսնել, որ հասարակ մշակը, համեմատելով իր զգութիւնը բարի բռն մաքով վերցրած բանւորի գործադրութիւնների և աշխատածի միջև գոյութիւն ունեցող անհամապատասխանութիւննից: Սակայն առ դեռ նքանաց չի զարձնում երկու զանազան զասակարգերի անդամներ:

2) L. Stein, I. c. s. III—IV (յառաջարանը), 13, 14, 74.

3) Զօմբարտ, «Die deutsche Volkswirtschaft im XIX Jahrhundert», կար-

Այս բանը պնդելը կոպիտ սխալ է: իհարկէ, Մարքսը որոշ նպատակների համար պիտի կանգ առնէր «Ճնշւածներ» և «Ճնշողներ», «Չահագործւածներ» և «Չահագործողներ» բաժանման վրայ ։¹⁾

Այս սահմանաբաժանումը, որն այնքան չի դուր գալիս «սօցիալ-բուրժուատ» Զօմբարտին, սակայն բաւական էական նշանակութիւն ունի, իսկ շատ հարցերի համար՝ ուղղակի վճռական նշանակութիւն: Ուրիշների համար նա իհարկէ բաւարար չէ: Բայց միթէ Մարքսն իր վերլուծումը սահմանափակում էր այդ բաժանումով: Միթէ նա ամեն բանի մէջ էլ աւելի հեռու չէր գնում:

XVII, Տ. 513. Հեղինակը նկատում է, որ Ֆրանսիան սօցիալական դասակարգերի թէօրիայի ծննդավայրն է: Այսուղ է, որ Փրանսիական մեծ յեղափոխութեան դէպքերը, մասնաւանդ բէստաւրացիայի ժամանակաշրջանի և լինական յեղաշրջան դէպքերը պատմաբանների աշքերը սաց արին ժամանակակից հասարակութեան բաղկացուցիչ տարրերի վրայ: «Գրիգօֆ, Մինիէի և Լուի Բլանի աշխատութիւններում կարելի է արդէն կարդալ ամեն բան (?)», ինչ որ մենք այժմ գեռ կարող ենք արտայայտել սօցիալական դասակարգերի էռութեան և ծագման մասին: Նրանց շարադասութիւնը օրինակ դարձաւ և ուրիշ երկների թէօրիենիների համար, և մենք վերմանացիներու մինչև այժմ էլ ամեն բանում, մինչև իսկ տէրմինօլոգիայում թափառում ենք Փրանսիական մեծ պատմաբանների և նրանց գերմանական տեսաբերների յետելից, որնցից ամենաշատ ազդեցիներն են Լորէնց Փօն Շտայնը և Կարլ Մարքսը (նոյն տեղում, երես 512): Պ. Դիմինօվը «Կօմմ. Կուս. Մանիֆէստ» վերջին հրատարակութեանը կցած իր յառաջաբանում բանակառում է Զօմբարտի դէմ, նրան մեղադրուի, առանց բաւական հիմքերի, այն փաստի չգիտութեան մէջ, որ Մարքսը նախորդներ է ունեցել: Զօմբարտի վերջին գրւածքները ցոյց են տալիս, որ նրա հետ պիտի բանակառ միւս ծայրից:

¹⁾ Այս բաժանումը սովորական է մինչ—մարքսեան սօցիալիզմի ներկայացուցիչներից մեծամասնութեան համար: Այսպէս, Գէօրգ Ռուլը իր գրքում «Գeschichte d. ersten sozialen Arbeiterbewegung» բերում է հետեւալ արտադրութիւնը Վիէլէմ Մարքս (1844թ.) «Blätter d. Gegenwart für d. soziale Leben»: «Մինչեանդամ մեր ժամանակի մակերևութեական դիտողի համար չի կարող զաղունիք մնալ, որ ժամանակակից հասարակութիւնն աւելի և աւելի կարուկ բաժանում է երկու դասակարգի, որոնց յարաբերութիւնները զէպի իրար զանում են աւելի և աւելի սպառնական և որոնց փոխագարձ թշնամութիւնը կարող է ամեն բոլէ սոսկալի կռափ փոխել: Դա մի կողմից անանդների բազմաթիւ դասակարգն է, նրանց որոնք ամեն բանից դրկած են, բայց իրենց աշխատանքի ուժից: իսկ միւս կողմից՝ սեփականատերների դասակարգը դասելողների դասակարգը».

Աւելի ևս, աւելի շուտով կարելի է Մարքսին և էնգլելսին մեզադրել այն բանում, որ նրանք հասարակութիւնը անդամանական դասակարգերի կամ դասակարգերը՝ խմբերի, խմբերը՝ նշանակութիւնը ու այլն, յաճախ բաւական որոշ կերպով չէին ընդգրծում զանազանութիւնը սկզբունքային, հիմնական, «դասակարգային» ցանկապատերի և աւելի կոտորակային, երկրարդական, գային» ցանկապատերի միջն: Այս տեսակի բարից, իսկապէս, նըներդասակարգայինի միջն: Այս անհամար միջն է աւելի կոտորակային, իսկապէս, նըներդասակարգաւորումը յաճախ զանազանակերպւում էր, և այդ կարելի է հեշտութեամբ ցոյց տալ միքանի քաղւածքներով:

Նրանց ամենավաղ աշխատութիւններից մէկում «Französische und englische Klassenkämpfe» ։) գէպքերը լուսաբանութիւն են ստանում «Փրանսիական ազգը երկու ազգերի պառակտման» ունետիրների ազգ և բանուրների ազգ» հայեցակետից: Այդ երկու «ազգերի» միջն եղած կորիւն է հէնց զասակարգերի կոփելը:

«Կօմմունիստական կուսակցութեան Մանիֆէստում» Մարքսը և ինքեւսը կոսում են «երկու մեծ, իրար դիմաց կանգնած դասակարգերի» մասին, «որոնց հետզհետէ աւելի և աւելի բաժանում է հասարակութիւնը»: Այդ գասակարգերը ստանում են աւելի ճշգրիտ բնորոշում էլ: — դա բուրժուազիան է և պրոլետարիատը: Բայց զրանց կողքին հեղինակները ջոկում են նաև հետեւալ խաւերը: 1) բոկոտն պրօլէտարիատը, որը նրանց գասաւորումով ամենում արդինաբերական պրօլէտարիատի հետ, առաջինը երկրորդից բոլորովին զատ ծագութ ունի, հանդիսանալով «երաւորական արդինաք հին հասարակութեան ամենաշածք շերտերի տարրալուծման»: 2) արիստօկրատիա, որ բուրժուական հասարակութեան մէջ ներկայացնում է ֆէոդալական կազմի մնացորդ: և 3) «միջին շերտ», որի մէջ հեղինակները հաշում են (մի ընդհանուր ստորաբաժանման տակ) մանր վաճառականներին, արդիւնաբերողներին, բանտիէններին, արհեստաուրներին և զիւգացիներին:

«Յեղափոխութիւնը և հակայեղափոխութիւնը Գերմանիայում» բրօիւրի մէջ Մարքսը տարբերում է 1) «բուրժուազիան, բառի իսկական մտքով» կամ «աւելի խոշոր կապիտալիստաների, առեւտարականների և արդիւնաբերողների դասակարգը»: 2) «մանր

¹⁾ Aus dem liter. Nachlass von K. Marx, Fr. Engels u. F. Lassal Stuttgart 1902, s. 112 ff.

արհեստաւորների և առևտիքականների դասակարգը»։ 3) «գիւղացիութիւնը» կամ «մանր հողատէր-գիւղացիների դասակարգը»։ 4) «բանուորների դասակարգը»։ 5) «ազնւականութիւնը»։

Վերջապէս «Դասակարգային կափւը ֆրանսիայում» բրօշիւրի մէջ Մարքսը տարբերում է։ 1) խոշոր-հողատիրական դասակարգը, 2) ֆինանսական արխտոկրատիան, 3) արդիւնաբերական բուրժուազիան, 4) «մանր բուրժուազիան իր բոլոր ստորաբաժանումներով», 5) գիւղացիութիւնը (որին նա, այսպիսով, նախորդ կաթէգորիայի մէջ չի մտցնում), 6) ինտէլիգենցիան, 7) մուրացիկ կամ բոկոսն պրօլէտարիատը, 8) բանուը դասակարգը։

Նոյնպիսի զանազանաւորումներ նկատում են նաև յետագայ մարքսիստների մօտ։ Այսպէս, եթէ մարդ կ, կառցկոմն օրինակ վերցնի, նա իր «ագրարային հարցի մասին» գրքում ասում է, որ «ժամանակակից հասարակութեան երեք միծ դասակարգերն են վարձու բանուորները, կապիտալիստները, հողատէրերը»։ Իսկ մի ուրիշ թէօրիական աշխատութեան մէջ, «Երփուրաեան ծրագրում», նա տարբերում է մի կողմից «ունեոր դասակարգերը», որոնք բաժանում են 1) խոշոր սեփականատէրեր կամ հարուստներ և 2) սեփականատէրերի ցածր, շահագործուղ (ՏԸՀ) շերտեր (մանր արհեստաւորներ, մանր գիւղացիներ)։ Իսկ միւս կողմից «չունեոր դասակարգեր», որոնք բաժանում են 1) կապիտալիստական արդիւնագործութեան պրօլէտարիատ, 2) արհեստաւորական արդիւնաբերութեան քարգահների փոխանցական շերտ, 3) «ծառաների առանձին դասակարգ» և 4) մուրացիկ պրօլէտարիատ։

Մի իսութով, բերւած օրինակների մէջ աւելի մանր շերտերը և խմբերը 1) իւրաքանչիւր անդում խմբակցւում են զանազան թւով միծ խմբերով, որոնց յատկացւում են դասակարգերի անուն, 2) խմբակցւում են զանազան ձևերով, այնպէս որ ստորին կարգի առանձին խումբը մտնում է երբեմն միւս երբեմն միւս խոշոր կաթէգորիան, երբեմն միանալով ստորին կարգի հարեան խմբերից մինի, երբեմն միւսի հետ, և վերջապէս 3) միւնյոն խումբը գցւում է երբեմն ստորին կարգի կաթէգորիաների, երբեմն վերին կարգի կաթէգորիաների վրայ, անւանում է երբեմն ինքնուրոյն «դասակարգ», երբեմն հասարակ ստորաբաժանում, իսկական «դասակարգ» բաղկացուցիչ տարր։ Այսպէս, գիւղացիութիւնը,

օրինակ, մի գէպքում հանդիսանում է «բանուորների ազգի» անգամ, որ կանգնած է «ունեորների ազգի» գիմաց. մի աւտեղ նրան հաշում են «միջին շերտում» «մանր վաճառականների և բանտիէների» հետ միասին, երբորդ գէպքում նա զուրս է զցւում «մանր բուրժուացիայից նրա բոլոր ստորաբաժանումներով» և «հանդիսանում է իրեն ինքնուրոյն հողագործների զատ դասակարգ. չորրորդ գէպքում նա ճանապարհորդում է սօցիալական բուրգի ամենաբարձրը՝ «ունեոր դասակարգերի» շարքերը, «խոշոր սեփականատէրերի և հարուստների» հետ կողք կողքի։ Ի՞նչ է այդ, եթէ ոչ, իսկապէս, մի չարգաշ ճամբորդութիւն, որի ընթացքում շարունակ իսկ և իսկ օվիդիական կերպարանափոխութիւններ են տեղի ունենում։

Դժւար չէ տեսնել, որ այսպիսով «դասակարգ», «դասակարգային կարգ» և «գասակարգային հայեցակետ» հասկացողութիւնները դառնում են անհաստատ և անկայուն, որ լայն ասպարէզ է բացում անհաստական կամայականութեան։

Ստորև մինք ցոյց կըտանք, թէ ինչպէս անբարեյաջող կերպով է անդրադառնում այս անհաստատութիւնը դասակարգային կուի ամբողջ թէօրիայի վրայ նրա ներկայ ձևում։ Յամենայն գէպս, այժմ արգէն բոլորովին պարզ է, որ «գասակարգի մասին» հասկացողութիւնը հաստատելու համար ամենեին բաւական չէ հասարակութեան շերտաւորւելու սոսկ փաստն արձանագրելը։ Ծագում են հարցեր—ապա որտեղ են վերջանում «գասակարգի» սահմանները և որտեղ է սկսում մի ամբողջական դասակարգի անդամանասութիւնը առանձին շերտերի և ստորաբաժանումների։ Ո՞քան հիմնական դասակարգեր գոյութիւն ունեն, դասակարգեր, այս խօսքի իսկական խիստ մտքով։ Ո՞րտեղ են վերջանում միենոյն դասակարգի անդամների միջև եղած զուտ քանակական տարբերութիւնները և ո՞րտեղ են ոկտում որակական, սկզբունքային տարբերութիւնները, որոնք պահանջում են մարդկանց զանազան հասարակական դասակարգերի վերագրելը։ Կարելի է արդեօք, եթէ ոչ զործականապէս, ապա ուրեմն տեսականապէս, այդպիսի սահման ցոյց տալ, թէ նա բոլորովին պայմանական է և յարաբերական։ Ո՞րն է այդ զանազանման չափը, կամ տրամաբանութեան տէրմիններով առած, ո՞րն է հասարակական խմբ-

բերի այդ դասակարգաւորման հիմքը: Այս բոլոր հարցերի պատասխանները միասին գումարված՝ կարող են դասակարգային կռւի լրիւ թէօրիան կազմել: Իսկ մինչև այն ժամանակ, քանի դեռ այս պատասխանները չեն տրւած, իսկ աւելի ես, քանի այս հարցերն իսկ կարուկ կերպով չեն դրւած, մենք ունենք դասակարգային կռւի փաստի միայն հասարակ աշխաչափային արձանագրումը, այլ ոչ թէ նրա թէօրիան:

Իսկ քանի մենք այդպիսի թէօրիա չունենք, մինչև այդ ժամանակ մենք ոչնչով չենք զանազանում վուլգարացած մարքսիզմի այն ներկայացուցիչներից, որոնք իրենց համար քիչ թէ շատ պարզ հասկացողութիւն չըկազմելով հասարակութիւնը դասակարգերի բաժանուելու հիմքի մասին, իրենց պատճառաբանութիւնը ծանրաբեռնում են, հոլովելով «դասակարգ», «դասակարգային կոիւ» և այլն խօսքերը բոլոր հոլովներով:

Մինչև այժմ մենք միայն մի գրական արդիւք տեսանք ժամանակից հասարակական դասակարգերի բնութեան հարցի վերաբերմամբ: Հասկանալի էր, որ դասերի բաժանելու իրաւաբանական հիմքից տարբեր, մենք այստեղ գործ ունենք տնտեսական հիմքի հետ: Բայց ի՞նչպէս աւելի մօտաւոր կերպով սահմանել դասակարգային այս անտեսական բնութիւնը: Եւ ամենից առաջ, վնասի արդեօք որոշիչ յանկանիշներ արտադրութեան պրօցեսում նրա բռնած դիրքի առանձնայատկութիւնների մէջ, թէ այդ վնասի բարիքների բաշխման մէջ նրա մասնակցութեան առանձնայատկութիւններում:

Այս հարցը ներկայաւում էլ չէ կորցրել իր այժմէութեան հետաքրքրութիւնը: Բնորոշ է այն, որ մեզանում Ռուսաստանում այդ հարցը յանգեց թէօրիական ընդհարժան սօցիալիստակավունականների և սօցիալ-դէմոկրատների միջև: Առաջինները պնդում են, որ մի որոշ անհատ կամ հասարակութեան մի որոշ խումբ մի դասակարգի, օր., բուրժուազիայի մէջ հաշւելու կամ չըհաշւելու համար իրեմ վճռող յատկանից առաջ յայտնում է եկամուտի աղբիւրը, որով ապրում է որոշ անհատը կամ խումբը: Եկամուտի աղբիւրի նմանութիւնն է, այն է՛ուրիշ մարդկանց չըվընարւած աշխատանքի, յաւելեալ արժէքի ստանալը—որ հէնց առաջին շաբթում հանդիսանում է այն յատկանիշը, որը մարդկանց որոշ խմբեր միացնում է մի սերտ խմբւած բուրժուական դասա-

կարգի մէջ: Բուրժուազիայի բոլոր անդամների և խմբերի շահերը (նոյնպէս և բանւոր դասակարգի բոլոր անդամների և խմբերի շահերը) «համերաշխ են նրանց սօցիալական գրութեան հէնց էռւթեամբ, այն գերի բնաւորութեամբ, որ նրանք խաղում են բուրժուական, կապիտալիստական ժողովրդա—տնտեսական մեխանիզմում»:¹⁾

Հէնց սրա հետ է, որ սօցիալ-դէմոկրատները համաձայն չեն: Նրանց կարծիքով, «հասարակութեան զանազան դասակարգերի որոշիչ, հիմնական յատկանիշը վնասի եկամուտի աղբիւրում նշանակում է առաջին տեղը քաշել բաշխման յարաբերութիւնները, որոնք իրապէս արտադրութեան յարաբերութիւնների հետեանք են: Այդ սխալը վաղուց յոյց է տւել Մարքսը, որ այդ բանը չը տեսնող մարդկանց վուլգար սօցիալիստներ անւանեց»: 2) Բոտ Մարքսի, ասում է «Խոկրա»-ի մի այլ յօդւած, «բաշխման որոշ յարաբերութիւնները հանդիսանում են արտայայտութիւն արտադրութեան պատմականօրէն սահմանւած յարաբերութիւնների», «պայմանաւորում են» այս վերջիններով, նրանց «ենթագրում են—ոչ միայն արտադրութեան պայմաններով, այլ ևս պատմականօրէն»: 3)

Ի՞նչն է այստեղ ճիշտ և ի՞նչը անձիշա

Ցիշած յօդւածների հեղինակները գիտեն, որ ըստ Մարքսի արտադրութեան յարաբերութիւնները սահմանում են բաշխման յարաբերութիւններ: Բայց նրանք չը գիտեն. Նախ այն, որ ըստ Մարքսի բաշխման յարաբերութիւնները սահմանում են ոչ միայն արտադրութեան պայմաններով. երկրորդը՝ այն, որ բաշխման յարաբերութիւնները իրենց հերթին ներգործում են արտադրութեան տարաբերութիւնների վրա: Նրանք չեն հասկանում, վերջապէս, նաև հետեւալը: Եթէ մինչև անդամ միմիայն արտադրութեան յարաբերութիւնները սահմանէին բաշխման յարաբերութիւնները, և եթէ մինչև անդամ սրանց կողմից հակառակ ներգործութիւն չըկրէին, ապա ուրեմն ամենկին միւնոյն բանը չէր լինի, թէ արդեօք արտադրութեան պայմանները անմիջապէս են սահմանում հասարակութեան բաժանումը դասակարգերի, թէ նրանք անմիջապէս սահմանում են բաշխման պայ-

1) «Փասակարգային կոիւը գիւղում»: Պ. Բ. № 11.

2) «Այգրա» № 27, երես 2.

3) «Այգրա» № 33, երես 4.

մաններ, որոնք արդէն իրենց հերթին սահմանում են համապատասխան հասարակական խմբերի գասակարգային շահերը։ Այս դէպօւմ, այդ խմբերը դասակարգաւորելիք՝ անպատճառ կարիք կը լինի «առաջին շարքը» բաշել եկամուտի աղբիւրները, անմիջական, որոշիչ յատկանիներ ընտրել ամենից առաջ «բաշխման պայմաններում»։

Հէնց նրանում էլ կայանում է վուլգար մարքսիզմի զանապանութիւնը Մարքսի և էնգէլսի հայեացքներից, որ վերջիններս ուզում են հասարակական կեանքի բոլոր երեսյները յանդեցնել միայն «վերջի վերջոյ» արտօղական յարաբերութիւնների, այն ինչ վուլգար մարքսիստները ուզում են ամեն ինչ և ամեն բան անպատճառ նրանցով բացարել անմիջականօրէն։ Մարքսի և էնգէլսի տեսակետով սօցիալական յարաբերութիւնների համար գոյութիւն ունի մի ամբողջ սանդուխը «Երկրորդական» փաստերի և «վերնաշնչերի»։ և քանի բարձր է վերնաշնչնքը, այնքան աւելի «միջնորդական», «արտացոլած» է հոնդիսանում նրա վրա արտադրական «Փունդամենտի» (հիմքի) աղդեցութիւնը, կարելի է ուզածի պէս քննադատել և այս բարդացրած թէօրիան, բայց յամենայն դէպս անկասկած է այն, որ նա անվերջ բարձր է այն կոպիտ, վուլգարցրած մարքսիզմից, որն անպատճառ ուզում է անմիջական դուզիւականութիւն հաստատել արտադրութեան պայմանների և բոլոր այլ սօցիալական երեսյների միջն։

Մեր կարծիքով, հասարակութեան դասակարգերի բաժանւելը անմիջական կապ ունի հէնց բաշխման յարաբերութիւնների հետ, այդ պատճառով էլ այս կամ այն դասակարգին պատկանելու որոշիչ յատկանիշը առնուում է ամենից առողջ այդ տեղից։ Դա ամեններն չի նշանակում—ինչպէս վուլգար մարքսիստներին թուում է—ժխտել աննուզակի պատճառական կապը մի որոշ հասարակութեան դասակարգային շէնքի և նոյն հասարակութեան ամբողջ արտադրական կազմի միջն։ Այդ պատճառով էլ մինք խօսում ենք (տես վերևը) որոշ դասակարգի բոլոր անդամների շահնց էութեամբ, այն գերի ընաւորութեամբ, որ նրանք խաղում են բուժուական, կապիտալիստական ժողովրդաւնտեսական ժամանակում։

Թուս մարքսիստները հեշտութեամբ կարող են համոզւել, որ

մեր բոլոր ասածը կատարեալ ճշտութեամբ տալիս է Մարքսի և էնգէլսի հայեացքների էութիւնը։ Դրա համար բաւական է, որ նրանք վերցնեն էնգէլսի գրքոյկը, որ ուղղւած է Դիւրինդի դէմ։ Կյուտեղ նրանք կը կարողանային հետևեալն իմանալ։

«Հասարակութեան որոշ պատմական կազմի արտադրութեան և փոխանակութեան տեսակի և եղանակի հետ միատեղ, նոյնպէս և նախորդող պատմական պայմանների հետ միաժամանակ տրւում է արդիւնքների բաշխման տեսակը և եղանակը»։

«Բաշխումը ստկայն ոչ թէ արտադրութեան և փոխանակութեան հասարակ կրաւորական կատարութիւնների, նա միենոյն ժամանակ ուժեղ և հակադարձ աղգեցութիւն է անում արտադրութեան և փոխանակութեան վրա»։

«Իսկ բաշխման զանապանութիւններից առաջ հետ գալիս և դասակարգային զանապանութիւնները։ Հասարակութիւնը բաժանւում է արտօնեալ և զրկւած, շահագործող և շահագործող, տիրող և հաղատակ գասակարգերի»¹⁾։

Մեզ թուում է, որ այս ամբողջ միջնադէմը միայն մի աւելորդ անգամ վկայում է, թէ ինչ աստիճան մարքսիզմի հոգեւոր հայրենը յաճախ «ոչ մարքսիստներ» են հանդիսանում, կամ որ աստիճան մեր «ուղղագիտու» սօցիալ-դէմոկրատները քիչ հասկանում և շատ վուլգարացնում են Մարքսի ուսմունքը։

Բայց եթէ հասարակութեան դասակարգերի բաժանւելը անմիջական կապ ունի բաշխման յարաբերութիւնների հետ, ապա ուրեմն ինչպէս կարելի է աւելի մօտիկ սահմանել այդ կապը։

Այդ հարցին առաջինը փորձել է պատասխանել Աղամ Սմիտը։

«Հողի և աշխատանքի տարեկան արտադրողականութեան ընդհանուր մասսան, կամ որ միենոյն է, նրա արժէքի ընդհանուր գումարը—ասում է նա—երեք մասի է բաժանւում,—հողային բէնտա, աշխատավարձ և կապիտալի վատակ, և ժողովրդի երեք տարբեր դասակարգերի եկամուտն է կազմում, որոնցից մինը ապրում է բէնտայով, միւսը՝ աշխատավարձով, իսկ երբորդը՝ վատակով (որինալի): Այս երեք մեծ ստորաբաժանութեները կազմում են իւրաքանչիւր լուսաւորւած հասարակութեան երեք սկզբնական հիմնական դասակարգերը, որոնց եկամուտը վերջի և վերջոյ

1) «Herrn Eugen Dürings Umwälzung etc.».

պոյսւթեան միջոցներ է պալիս ամբողջ ազգաբնակութեանը»¹⁾:

Ի՞նչ վերաբերում է Մարքսին, ապա նա այս կետում, ինչպէս և ուրիշ շատ կետերում, տալիս է միայն դասական (կլասիկ) քաղաքանակութեան գրութիւնների յետագայ զարգացումը և խորացումը: Նա կարող էր սահմանել իր յարաբերութիւնը գէպի Ազգամ Սմբառ և Ծիկարդօն նոյն խօսքերով, որոնցով Քրիստոսը սահմանում էր իր յարաբերութիւնը գէպի Մովսէսը. «Ես չեմ եկել օրէնքը քանդելու, այլ լրացնելու»:

«Կապիտալի» երրորդ հատորի վերջին գլուխը («Դասակարգեր» անւանւած) Մարքսը սկսում է կատարելապէս Ազգամ Սմբառի ոգով: «Միայն բանուորական ուժի սեփականատէրերը, կապիտալի սեփականատէրերը և նողի սեփականատէրերը, որոնց եկամուտների համապատասխան ազգիւրներ են հանդիսանում ուրիշաւոտագարձը, վաստակը և բէնտան,—ուրիմն՝ վարձու բանուորներ՝ կապիտալիստները և հոգատէրերը—կազմում են երեք ընդառողասկարգերը ժամանակակից հասարակութեան, որը հիմնուուն արտադրութեան ժամանակակից եղանակի վրա»²⁾:

Այսպիսով, Մարքսը ամբողջովին ընդունում է, որ դասակարգին բաժանումը համապատասխանում է յիշւած ազգիւրներին կամ եկամուտի տեսակներին: Բայց այս գեռ քիչ է նրա համար: Կարող է նոր հարց հրապարակ գալ, թէ ինչու հասարակութիւնը դասակարգերի է բաժանում համապատասխան եկամուտի այս տեսակների: Ի՞նչն է կազմում դասակարգ, այսինքն Ի՞նչն է անմիջապէս ծառայում իրեն շաղախ, որը միացնում է

1) Տես ուսերին թարգմանութիւնը «Ազգեած. օ նորածէն նարօծ»: Ը. 1866 թ. 1 տր. 477. Այս սահմանումն ընդունել է նոյնպէս Միլլը և նրա ուսուցչական ն. Գ. Զերնիշնեկին: Տես նրա «Հեղինակութիւնների» արտասահմանեան հրատ. (Ենուան և Կ^o), Խենա 1870 թ., տ. IV, տր. 105, 144. «արտադրութեան երեք տարրերից (արդինքի եռանդամ բաշխման գէպում) իւրաքանչիւրը զատ պատկանում է առանձին դասակարգի, և այդ դասակարգին ընկած արդինքի մասը սահմանում է մըցութեամբ: Այն դասակարգը, որին պատկանում է աշխատանքը, կեսնքի այս ձեռում հանդիսանում է վարձու բանուորների գասը, որոնք աշխատավարձ են ստանում: Կապիտալը պատկանում է արդինարեական ձերնարկուների դասակարգին, որոնք վաստակ են ստանում, իսկ հողը՝ անշարժ սեփականութիւնների տէրերի դասակարգին...

2) «Կապիտալ», տ. III, երես. 733.

մարդկանց մի դասակարգի մէջ: Եւ այս մաքով, «Բնէ բանի հետեանքով վարձու բանուորները, կապիտալիստները և հողատէրերը ներկայացնում են երեք մեծ հասարակական դասակարգեր»:

Այս հարցը կարևոր է դնել, մանաւանդ որ «եկամուտի աղբւրը», «եկամուտի տեսակ» արտայայտութիւնները առանց նոր բացատրութիւնների հանդիսանում են ոչ բաւական որոշ: Այսպէս, օրինակ, Մարքսը մատնանիշ է անում այն, որ հողատէրերին կարելի է բաժանել մի քանի կարգի.—խաղողի այգետէրեր, վարելանողատէրեր, հանքային հարատութիւններ պարունակող հողատէրեր, ձգնորանանդի տէրեր: Ինչու չըհաշւել հարստութեան այս կօնկրէտարբեր տեսակները նոյն մաքով առանձին «եկամուտի աղբիւրներ», ինչպէս անտեսական կաթէգորիանները՝ թէնտան, վաստակը և այլն: Դժւար չէ նկատել, որ «նոյնը կըվերաբերեւ այն բանին, որ անվիրծ կարատման են հնթարկւում շահերը և դրութիւնները, որոնց վրա, շնորհիւ հասարակական աշխատանքի բաժանման, մաս-մաս են լինում ինչպէս բանուորները, նոյնպէս և կապիտալիստները»: Ուրեմն, որ հասարակութիւնը բաժանուում է դասակարգերի, «իբրև հետևանք եկամուտների և եկամուտների աղբիւրների նոյնութեան», այս վրութիւնը թւում է բոլորովին պարզ և հարցին սպասող պատասխան տեսող՝ միայն «առաջին հայեցքից»:

Բայց հէնց այստեղ էլ, հէնց ամենագագաթնակետում, ընդհատում է Մարքսի պատճառաբանութիւնը,—ընդհատում է երրորդ հատորի չաւարտած ձեռագրի հետ միատեղ...

Տրամաբանօրէն շարունակել այս պատճառաբանութիւնը յանձն առաւ վերջերս նրա ամենախոշոր «ուզդափառ» աշակերտներից մէկը, կ. Կառուցկին: Եւ անա թէ նա ինչպէս է դատողութիւններ անում:—

«Ի՞նչով է տարբերում հոգատիրոջ յարաբերութիւնը գէպի բանուորը և կապիտալիստը, համեմատած վարելանողատիրոջ յարաբերութեան հետ գէպի անտառականութիւնների տէրերի դասակարգին (յսածեա):

«Հողատիրոջ հողային ըենտան, ազգային եկամուտի մի որոշ մեծութեան գմբքում, կարող է աւելացւել կամ ի հաշիւ աշխատավարձի, կամ ի հաշիւ կապիտալիստական վաստակի—այսպիսով հողատիրոջ շահերը հակասութեան մէջ են վարձու բանուորի և կա-

պիտալիստի շահերի հետ։ Սակայն հումարի արտի տիրոջ հողացին բենտան աճում է առևնելին ոչ ի հաշիւ միւս տեսակ հողատէրերի հոդային բենտայի։ Մինչեւ անգամ ընդհակառակը, և՛ բէնտայի, և նրա հետ կապւած միենոյն տեսակ գետնի հողակտորի արժէքի աճումը իր յետելից քաշ է տալիս ուրիշ հողակտորների արժէքի և բենտայի զուգահեռաբար աճում։

«Վերցնենք միւս կողմից վարձու բանւորների դասակարգը։ Նրանք բաժանւում են տաղաքրիչների, զիւղատնտեսական մշակների, ջուղակների և մասողների, մետաղածուլական բանւորների։ Բայց այս ստորաբաժանութիւնը ամեննին դասակարգ չեն կազմում։ Նրանց բոլորի համար ընդհանուր է շահերի հակադրութիւնը կապիտալի և հողային սեփականութեան հետ, որովհետեւ ազգային հարստութեան որոշ մեծութեան դէպքում աշխատավարձը կարող է աճել միայն ի հաշիւ եկամուտի այս երկու ուրիշ աղբիւրների։ Ընդհակառակը, բանւորների հէնց նոյն դասակարգի սահմաններում շերտելից մինի աշխատավարձը ամեննին չի աճում ի հաշիւ միւսների։ աւելի շուտ տեղի է ունենում հակառակը։ մի կարգի բանւորների աշխատավարձի ամեն մի բարձրացումն աւելացնում է նրա բարձրացման միտումը նաև միւսների մօտ։ Նա ուժեղացնում է բանւորների ձգուումը՝ պահանջնել բարձրագոյն վարձ և թուլացնել ձեռնարկուների դիմադրական ուժը, որոնք պաշտպանում են նրա նախկին մակերևոյթը։

«Այժմ մենք արդէն տեսնում ենք, թէ ինչն է որ իսկապէս կազմում է առանձին դասակարգերը։ Դա ոչ թէ պարզապէս եկամտի աղբիւրների ընդհանրութիւնն է, բայց նաև նրանցից բղխող շահերի ընդհանրութիւնն է և ընհանրութիւնը այս և միւս դասակարգերի շահերի հակասութեան, որոնցից իւրաքանչիւրը ձգուում է միւսների եկամուտների աղբիւրը բարակացնել, որպէս պի ստիպի իւր սեփական եկամուտների աղբիւրը աւելի առատ կերպով բղխելու¹⁾։

Այսպիսով, ուղղափառ մարքսիզմի ամենից ականաւոր ներկայացուցիչը, Կաուցկին, որի շատ դրութիւնների հետ մենք

¹⁾ K. Kautsky, «Klasseninteresse—Sonderinteresse—Gemeininteresse», «Neue Zeit»-ը, № 34, 21 Jahrg. (1903), s. 541. Վերջում մենք կապացուցենք, որ այս որոշումը կատարելապէս համաձայն է «Կապիտալի» III հատորում Մարքսի չը վերջացրած, բայց ուրիշ տեղերում սպրդած հայեացքների հետ։

յաճախ ստիպւած ենք ընդհամաձայնել, այս կէտում մի հայեացք է արտայայտում, որի տակ մենք երկու ձեռքով ստորագրում ենք։ Ուուս սօցիալիստ-յեղափոխականների և սօցիալ-դէմօկրատների միջև եղած վէճի վերաբերմամբ այն մասին, թէ հասարակութեան գասակարգերի բաժանումը արգեօք անմիջապէս կապ ունի²⁾ արտադրութեան պայմանների հետ, նա կարծիք է յայտնում յօգուտ առաջին որոշման։ Առաջին տեղն է քաշում նա եկամուտի աղբիւրների ընդհանրութիւնը, իսկ յետոյ արդէն՝ այդ նոյն առաջին գործնից բղխող շահերի ընդհանրութիւնը և նրանց հակասութիւնը ուրիշ խմբերի շահերին։ Նրա եղբակացութիւնը ամենից լաւ կարող է այսպէս ձևակերպւել—մարդկանց միացնում են տարբեր, անջատ դասակարգերի մէջ նրանց եկամուտի այն հիմնական, անջատ աղբիւրները, որոնք, ընդհանուր ազգային եկամուտի մի որոշ մեծութեան դէպքում, կարող են լայնանալ միայն մէկը ի հաշիւ միւսների։

Մեր կարծիքը արտայայտելով մենք յաւակնութիւն չունէինք մի ինչ որ նոր բան ասած լինելու։ Մենք միայն կանգնած էինք մեր մեծ ուսուցիչ Ն. Գ. Զերնիշևսկու հայեցակէտի վրա։ Այս հայեցակէտը, որ նա զարգացրել է 1862 թ., բերում է այնպիսի եղբակացութիւնների, որոնք այժմ, քառասուն տարի անցած, կառուցկին կրկնում է համարեա տառացի։ Դեռ Ն. Գ. Զերնիշևսկին է տւել դասակարգային բաժանման և դասակարգային կուի հիմքերի փայլուն ձևակերպութիւնը, ցոյց տալով ընթացյի, վաստակի և աշխատավարձի հիմնական հակամարտութիւնը։ «Ի՞նտան, ասում է նա, վաստակի և բանւորական վարձի վերաբերմամբ ձիշտ նոյնպիսի դեր է խաղում, որը խաղում է վաստակը բանւորական վարձի վերաբերմամբ»։—Եթե ընթան աճում է, այն ժամանակ «պակասում է... այն պրօլորգիան, որը կազմուում է աճող արդիւնքի մէջ վաստակից և բանւորական վարձից», ուրիշ խօսքով ասած—«ընթան դիմում է դէպի վաստակի և բանւորական վարձի կանուումը»։ Այսպէս է եկամուտի եռանդամ բաշխման հիմնական օրէնքը կապիտալիստական հասարակութեան մէջ։ «Այս սխսեմում վաստակը դիմում է դէպի բանւորի հապատակեցումը կապիտալիստին, իսկ ընթան դիմում է դէպի բանւորի և կապիտալիստի միասին հապատակեցումը հողատիրովը»։ Իսկ ինչ սօցիալ-քաղաքական հետևանքներ են բղխում այստեղից։ Զերնիշևսկին այս բանը նկարում է օրինակելի պարզութեամբ։

«Բենտան ձգտում է հպատակեցնել իրեն վաստակը և բանական վարձը—եթէ սա թարգմանենք իրական փաստերի, նշանակում է, որ լէնուորը թշնամի է ֆերմէրի և բանուորի ինքնուութեան. և մենք Անգլիայում տեսնում ենք, որ լէնոլորդը աշխատում է նրանց պահել իրենից կախած, մինչև անգամ ի վնաս բոլորի և ի վնաս իւր:

«Մենք տեսանք, որ վաստակը ձգտում է կլանել բանւորական վարձը—դա նշանակում է, որ կապիտալիստը պէտք է բանուորին իրենից կախած պահէ նոյնպէս, ինչպէս որ լէնոլորդը պէտք է պահէ կապիտալիստին և բանւորին: Բոլոր քաղաքակիրթ երկիրների պատմութիւնը այս միտումի մշտականութեան անընդհատ վկայութիւնն է միայն:

«Մենք տեսանք, որ ընտայի շահերը հակադիր են վաստակի և բանւորական վարձի շահերին միտսին: Այս դասի դէմ, որին ընտան բաժին է ընկնում, միջին դասակարգը և հասարակ ժողովուրդը միշտ դաշնակիցներ են եղել:

«Մենք տեսանք, որ վաստակի շահը հակադիր է բանւորական վարձի շահին: Հէնց որ կապիտալիստների դասը և բանուորի դասը իրենց դաշնակցութեամբ յաղթանակում են ըենտան ստացող դասակարգին, երկրի պատմութեան պլիմաւոր բովանգակութիւնը դասնում է միջին դասի կոխը ժողովուրդի հետ»: ¹⁾

Այսպիսով մենք ունինք կատարելապէս սահմանաւծ և վերջաւորած որոշում այն հարցի, որ վերաբերում է հասարակութեան դասակարգերի բաժանուելուն: Դեռ Աղամ Սմիտի կողմից զծած, նա աւելի խօր կերպով դրւեց սոցիալիստներ՝ Զերսիշեսկու, Կ. Մարքսի, Կ. Կառլիցի ու աշխատութիւններում: Հստ այս թէօրիայի, ժամանակակից բուրժուական հասարակութեան բաժանուելը սոցիալական դասակարգերի՝ կապւած է ֆունկցիապէս ընդհանուր աղքային եկամուտի բաժանման հետ այնպիսի հիմնական տեսականիքի, որոնք աղքային եկամուտի որոշ մեծութեան մէջ կարող են պէս մենք դեռ ևս առիթ կունենանք համոզւելու, հետեւալ հարցեակարգեր զոյութիւն ունեն, որոնք են դրանք. ուր են սահման-

205.) «Сочинения Н. Г. Чернышевского», Женева 1870 г., т. IV, страниц. 201, 203,

ները դասակարգային տարբերութիւնների միջև իւրաքանչիւր դասակարգի ներսում. մի խօսքով՝ բոլոր այն հարցերը, որոնց լրիւսպառող պատասխանը իր գումարով մեզ կընկըլայացնի մի վերջաւորւած և ամբողջական «դասակարգային կուի թէօրիա»:

Տեսնենք հիմա, թէ վերևում զարգացրած հայեացըներին ուսւացիալ-դէմօլրատիան ինչ տեսակ սոցիալական դասակարգերի սոցիալ-դէմօլրատիան ինչ տեսակ սոցիալական դասակարգել: Նրա կարծիքով, հասարակական դասակարգ—դա «մարդկանց աւելի կամ պակաս ընդարձակ մի կարգէ», որոնք արտադրութեան նոյնանման յարաբերութիւնների մէջ են դէպի միւս կարգերը»: ¹⁾ Այս սահմանումը մեղանչում է ինչով են դէպի միւս կարգերը: Տեսնենք ուրեմն, թէ ինչով ուզէք, բայց ոչ որոշութեամբ: Տեսնենք ուրեմն, թէ ինչով պէս այս սկզբունքի համեմատ «Իսկրա»-ն անդամահատում է ասաւակութիւնը դասակարգերի: «Հասարակական արտադրութեան միջոցների այս կամ այն մասի իւրացումը և նրանց գործադրութիւնը մասնաւոր անտեսութեան համար, արգիւնքներ վաճառելու տնտեսութեան համար—ահա հիմնական տարբերութիւնը ժամանակակից հասարակութեան մի դասակարգինը (բուրժուազիա) պրօլետարիատից, որը զրկած է արտադրութեան միջոցներից և ծախում է իր աշխատանքի ոյցը»: ²⁾ Մենք էլ չենք խօսում այն մասին, որ հոգատէրերի դասակարգի հակադրութիւնը այս ստորաբաժանմամբ բուլուսվին կորչում է: Հողատէրը, իբրև այդպիսին, բացի զրանից որ ոչ մի ուղղակի մասնակցութիւն չունի «արտադրութեան» մէջ: Աւելին ևս, ձեռնարկու-կապիտալիստների դասակարգը ևս այս կերպ դադարում է ազատ դասակարգ լինելուց և լուծում է «մասնաւոր տէրերի» ընդարձակ խաւում, որոնք արգիւնքներ են վաճառում, մինչևնախակապիտալիստական ժամանակների արհեստաւորն իսկ: Միւս կողմից ժամանակակից բուրժուազիայի շատ կարգերը ամեննեին չեն մտնում «Իսկրա»-ի սահմանման տակ: Յիրաւի, «հին բարի ժամանակների» արհեստաւորը իսկապէս բնորոշւում է «հասարակական արտադրութեան միջոցների մի մասի իւրացմամբ և նրանց գործադրութեամբ մասնաւոր անտեսութեան համար», այնինչ ժամանակակից վաճառականը կամ բանկիրը ամեննեին գործ չունի արտադրութեան մի-

1) «Искра» № 33, страниц. 4.

2) «Искра» № 27, страниц. 2.

ջոցների հետ, այլ միայն արտադրութեան պատրաստի արդիւնքների և մէկ էլ շրջանառութեան միջոցների հետ: «Անկրա»-ի սահմանմամբ դուրս է գալիս, որ նրանք ամենքին «ըռութֆուա» չեն. բայց ահա աշխատաւոր զիւղացին, որ մի կտոր հող ունի, «մանաւոր տնտեսութեամբ» և «արդիւնքի վաճառմամբ» բուրժուա է: Միթէ այսպիսի «Պասակարգաւորումը» որևէ ընդհանուր բան ունի Մարքսի թէօրիայի հետ: Այն, Մարքսի մօտ ամբողջ «Կապիտալ»-ի միջով անց է կացրած այն միտքը, որ բուրժուան կապիտալի ներկայացուցիչ է, իսկ «կապիտալը» միենյն բանը չէ, ինչ որ «արտադրութեան միջոցները».—կապիտալը արտադրութեան այն միջոցներն է, որոնք կտրւած են արտադրողից և թշնամքար հակադրւած նրան,—«ինքնաճող արժէքն է», որ ներծծում է բանւորի չըվճարած աշխատանքը: Այդ պատճառով «արտադրութեան մանր միջոցները, որոնք երես արտադրողի համար արտադրութեան միջոց են ծառայում, երեսց արժէքում չեն աճում ուրիշի աշխատանքի աւելմամբ՝ ամենքին կապիտալ չեն»¹⁾, և «մանաւոր սեփականութիւնը այս կամ այն ձեռն է ընդունում նայած նրան, թէ արդեօք այդ մասնաւոր մարդիկ բանւորներ (աշխատաւորներ) են, թէ ոչ բանւորներ»: ²⁾ Բայց ուստի սօցիալ-դէմոկրատիայի համար այս բոլոր զանազանութիւնները գոյութիւն չունին: «Բուրժուազիայի» կարգին է վերագրութ նա նրան, որին Մարքսը անւանում «այնպիսի բանւորը, որը դեռ փետրած հաւ չէ ներկայացնում, այլ ունի իր սեփական աշխատանքի գործիքները»: ³⁾ Բուրժուազիան բնորոշելում նա դառնում է դեպի յետ, դէպի կուկ Բլանը, որը նոյնպէս քիչ էր ուշադրութեան առնում զանազանութիւնը արտադրութեան միջոցների և կապիտալի միջև: Բաւական է այս կամ միւսը ունենալ՝ պիօլետարեատին թշնամի մի դասակարգ կազմելու համար: Բայց այսպէս շփոթելը, որը ներելի էր կէս հարիւրամեակ առաջ կուի Բլանի համար, ներելի չէ այժմ, Մարքսի աշխատանքներից յետոյ:

Բնորոշ է նաև հետեւելը.—«Անկրա»-ն կամենում էր սօցիալական դասակարգերի իր «գերմարքսիստական» թէօրիան կառուցանել, դեկավարելով արտադրութեան շրջանից վերցրած

յատկանիշներով, և ոչ մի դէպ—բաշխման շրջանից: Վերջին մէթօդը նա համարում էր յատուկ վուգար սօցիալիզմին: Եւ ինչ: Բուրժուազիայի որոշիչ յատկանիշը սահմանելիս նա սկսում է... իւրացրութիւնից և մասնաւոր տնտեսութեան համար գործադրութիւնից իւրացրութիւնից և մասնաւոր տնտեսութեան համար այն առարկաների մի մասի, որոնք որոշ հասարակութեան համար այն առարկաների միջոցներ են ծառայում: «Անկրա»-ն չի նկարուել արտադրութեան միջոցներ և ծառայում: «Անկրա»-ն չի նկարուել արտադրութիւնը կը կանակի իմաստ ունի. 1) իւրեւ իւրացրում այն արկացողութիւնը կը կանակի իմաստ ունի. 2) նոյնը և արտադրողական առարթեան համար, և 2) նոյնը և արտադրողական առարթեան համար (նոյնպէս և բնութեան ուժերի, որոնց կակաների վերաբերմամբ (նոյնպէս և բնութեան ուժերի, որոնց կակայիշեր և հետեւեալ տեղը Մարքսից).—«Յամենայն դէպս կակըյշեր և հետեւեալ տեղը Մարքսից.՝ «Յամենայն դէպս կակըյշեր է ասել, որ կապիտալը (և հողային սեփականութիւնը, որը բելի է յափշտակել): Եթէ «Անկրա»-ն այս չըմոռանար, ապա բելի է յափշտակել): Եթէ «Անկրա»-ն այս չըմոռանար, ապա բելի է ասել, որ կապիտալը (և հողային սեփականութիւնը, որը բելի է յափշտակել): Ինըն այս դէպը ենթադրւում է իւրեւ նոյն հակադրութիւնը, որը բազէն ենթադրւում է բաշխումն, այն է՝ բանառներին զրկելը աշխարդէն ենթադրւում է բաշխումն, այն է՝ պայմանների սեփականութիւնից, այդ աշխատանքի պայմանների սեփականութիւնից են ձեռքուժած և այն: Սա մի պայման է այդ խօսքի վերոյիշեալ երկրորդ մաքով: Նրանք Մարքսի կարծիքով «ներկայացնում են հիմքերը որոշ հասարակական դերերի, որ ստիպւած են խաղալու որոշ գործիչներ հէնց արտադրութեան դրութեան պայմանների սահմաններում...» և նրանք արտադրութեան պայմաններին և դրանց ներկայացուցիչներին իւրատեսակ հասարական բնաւորութիւն են տալիք»¹⁾.

Այստեղից դարձեալ կարելի է տեսնել թէ ինչ աստիճան անկարող էր «Անկրա»-ի փորձը՝ սօցիալական դասակարգերի թէօրիա կառուցանել, արհամարհելով բաշխման պայմանները (որպէսպի վուգար սօցիալիզմի) մէջ չընկնի) և բացառապէս «արտադրութեան պայմանները» առաջ քաշելով: «Անկրա»-ն աչքաթող է արել նրանց միջև այն սերտ, անքակտելի կապը, ազդեցութեան այն փոխադրծութիւնը, որով «Անկրա»-ի հակադասումը իր ամբողջ կամաստը կորցնում է: Որքան էլ որ նա աշխատում էր արհամարհիմաստը կորցնում է: Որքան էլ որ նա աշխատում էր արհամարհիմաստը կորցնում է: Եթէ հետեւ բաշխման պայմանները, նրանք այնուամենայնիւ եթէ հետեւ բաշխման պայմանները,

1) «Կապիտալ», տ. I. էր. 616.
2) «Կապիտալ», տ. I. էր. 572.
3) «Կապիտալ», տ. I. էր. 671.

ոչ մի, գոնէ միւս ձեռվ ներս թափանցեցին նրա սահմանման մէջ և նրա մէջ մի որոշ տեղ դրաւեցին: Այսինչ, հենց այդ արհամարժան փորձը նրա դասակարգաւորման համար անպատիծ չանցաւ, խճիծ և շփոթ ստցնելով նրա մէջ:

Այդ շփոթից ուղղակի կախւած է և այն փաստը, որ ոռւս մուժիկին,—այդ աշխատանքի և քաղցի տառապեալին գործարանական բանւորի տառապանքի այդ հարազատ եղորը,—«Աւքրա»-ն խել է բանւորական միջավայրից և բարձրացրել «բուրժուա»-ի աստիճանը: Այս օրինակով ամենից լաւ երկում է, որ դասակարգային կուի կեղծ թէօրիան սիայն տրամաբանական սխալի հետեանք չէ: Ոչ, նա մնխուսափելի կերպով տանում է դէպի գործանական սխաներ, որոնցից իւրաքանչիւրը կործանիչ հետեանքներ կարող է ունենալ յեղափոխական սօցիալիզմի գործի համար:

Աշխատաւոր Ռուսաստանի այս երկու տարրերի եղայրական դաշը յեղափոխութեան զօրաւոր յարձակողական ընթացքի անհրաժեշտ պայմանն է: Իսկ «Աւքրա»-ն իր թէօրիայով բաժանում է այդ տարրերը և դրանով ստեղծում է արհեստական արգելքներ գիւղում և քաղաքում բանւորական մասսանների շարժման այն ակտիւ համադրութեան գործին, որը հանդիսանում է ժամանակի հերթական կենսական խնդիրը: Աշխատաւոր ժողովրդի այս երկու տարրերի մէջ սեպ են ցցում, արացման սերմեր են ցանում: Բանւորներին սովորեցնում են նայել, իբրև թշրնամի դասակարգի անդամների վրա, նոյն այն գիւղացիներին, որոնց Մարքսը անւանում է «այնպիսի բանւորներ որոնք դեռ չեն դարձել փետրած հաւ և իրենք են իրենց արտադրութեան գործիքները կարգադրում»: Այն թէօրիան, որին յարում են ոռւս սօցիալ-դէմոկրատները, ոչ միայն գիտական մոլորութեան վրա է հիմնած, այլ և գործնականապէս վկասակար է յեղափոխական սօցիալիզմի գործի համար:

3) ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՒՂԱՑԻՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԿԱՐ- ԳԱՅՑԻՆ ԴԻՐՔԸ

Ինտա, վաստակ և աշխատանք,—այսպէս են եկամուտի երեք հիմնական, հակամարտ ձեւերը կամ տեսակները զարգացած

կապիտալիստական հասարակութեան մէջ: Արա համեմատ էլ վերջինս բաժանւում է երեք հիմնմկան, հակամարտ դասակարգի:—հոգատէրեր, կապիտալիստներ և բանւորներ: Հասկանալի է, որ տընդատեական կեանքի երեսյթները միշտ չի կարելի մաքուր ձեռվ դիտեալիս: Գոյութիւն ունեն նաև անցողական և խառն ձեւեր: Գոյութիւն ունեն և այնպիսի ձեւեր, որոնք կեղծ կերպարանք ունեն, թիւն ունեն և այսպիսից թւում են ոչ այն, ինչ որ իսայսինք առաջին հայեացքից թւում են այն, ինչ որ իսապէս սխանական մոլորութեան մէջ կապէս են: Այսպիսի կեղծ ձեւերը կարող են մոլորութեան մէջ անվարժ իդէօլոգին, իսկ ազգել վերլուծութեան մէջ անփորձ իդէօլոգին, իսկ աւելի ևս՝ կարճատես գօգմատիկին:

Պարզ է, օրինակ, որ խոշոր գիւղատնտես հողատէրը ներկայացնում է խառն ձեւ: Ստանալով և ընտառ, և կապիտալիստակայացնում է խառն ձեւ: Կրկնապատիկ «արկան վաստակ», նա կրկնապատիկ «ունկոր» է, կրկնապատիկ «արկան վաստակ», կրկնապատիկ «բուրժուա»: Բայց եթէ այդպէս է, ապա տօնեալ», կրկնապատիկ «բուրժուա»: Բայց եթէ այդպէս է, ապա բուրեմն մենք չըպիտի նայենք արտադրութեան միջոցներից չըուրեմն մենք պիտի նայենք արտադրութեան գուտտան է ստանում իր հողից, և իր սեփական տնտեսութեան գուտտան է ստանում իր հողից, և աշխատավարձը: Զե՞ որ նրա եկամուտը հէնց վաստակը, և աշխատավարձը: Զե՞ որ նա և հողատէր է, և տէր, և բանւոր իր «ձերնարկութեան»:

Այն մարդիկ, որոնք այս աხսակէտի վրա են կանգնած, չեն տարակուսում նաև այն բանից, որ գիւղացին յաճախ տառապում է սահմանողութիւնից կամ փողազրկութիւնից: Կապալ անկելով հողը և կաւահողութիւնից կամ փողազրկութիւնից: Կապէս գործարանատէրը, պարտքի մէջ խրւելով փոխ տողի ձեռքում, —ասում են նրանք, — պարտքի մէջ խրւելով փոխ այնպէս, ինչպէս գործարանատէրը, որը բանկիրից պարտք է անում, կամ կապալով հող է փերժնում գործարան կառուցանելու, հանք մշակելու, քարհանք բանեցնելու ժամանակաւում: Գիւղացու յարաբերութիւնը դէպի վաշխառուն կամ հոհամար: Գիւղացու յարաբերութիւնը դէպի վաշխառուն դէպի տէրը, դատէրը ոչ թէ նման է բանւորի յարաբերութեան դէպի տէրը, այլ կապիտալիստ-ձեռնարկուի յարաբերութեան դէպի իր ձեռնարկութեան համար հարկաւոր փողի և հողի տէրը:

Այս մտածողութիւնների արտաքին, առերևոյթ ճշմարտանմանութիւնը դիրում է մի շարք մարդկանց կարուկ կերպով բաժանել աշխատաւոր գիւղացիութիւնը արդիւնագործական պրոլետարիատից և ոչ միայն չըմիացնել վերջինիս հետ «բանւոր դասա-

կարգ» ընդհանուր, բարձրագոյն հասկացողութեան մէջ, այլ ընդհակառակը աշխատաւոր զիւղացիութիւնը զնել բուրժուազիայի շարքում: «Բուրժուազիան լինում է խոշոր, միջին, մասն և մանրագոյն», —ասում են նրանք. «զիւղացիութիւնը իր մասսաներով վերաբերում է երկու վերջին կարգերին: Բայց մանրագոյն բուրժուազիան էլ այնուամենայնիւ բուրժուազիա է»:

Միւսներն էին մի վերջին զիջում են անում. նրանք համաձայնում են ճանաչել զիւղացիութեան մի նշանաւոր մասը «կիսապրօետարիատ», հետևաբար, միւս կողմից՝ կիսաբուրժուազիա:

Բնորոշ է այս դէպքում այն, որ այսպիսի հայեացքի կողմակիցները միշտ քայլում են մարքսիզմի դրոշակի տակ: Այսինչ, հետո «Կապիտալի» հեղինակի խոր տնտեսական վերջուծութիւնը քանդում է հիմնական պատճառաբանութիւնները այս «աշակերտների», որոնք ուսուցչի անունովն են երգւում:

Իսկապէս ճիշտ է, որ գիւղացու յարաբերութիւնը դէպի փոխառուն նման է բուրժուա-կապիտալիստի յարաբերութեանը դէպի բանկիրը: Կատարելապէս սխալ է. և մի այսպիսի բան կարող են պնդել միայն այնպիսի մարդիկ, որոնք ամեննեն չեն հականում Մարքսի խոշոր տնտեսական ծառայութիւններից մէկը, այն է՝ նրա պարզաբանած զանազանութիւնը կապիտալիստական և վաշխառուական վարկի (կրէդիտի) միջեւ: Ինչպէս յայտնի է, «Կապիտալի» III հատորում Մարքսը ապացուցում է, որ արտաքին ձևերի նմանութեան հետ միասին, վարկի և վաշխառութեան միջև ըստ էութեան կարենը զանազանութիւնը ոչ միայն քանակական է՝ հիմնած տոկոսի չափի վրա, այլ որակական՝ սկզբունքային: Ժամանակակից վարկ, Մարքսի հայեցտկետից, մենք տեսնում ենք այնտեղ, ուր վարկային տուրքառ տեղի է ունենում երկու կապիտալիստների միջև. իսկ վաշխառուական բնաւորութիւն նա ստանում է այնտեղ, որտեղ փոխառուն ոչ կապիտալիստական արտադրող է: Ինչից է ուրեմն կախած այսպիսի զանազանութիւնը: Պատասխանը շատ պարզ է: Երբ մի կապիտալիստ միւսից փոխ է առնում կապիտա-լիստական արտադրութեան նպատակներով, ապա փոխ առած փողերը նրան անշխատ եկամուտ են բերում, և նա միայն այդ եկամուտի մի մասն է բաժին հանում բանկիրին, որը նրան փող

է փոխ տւել: Տուրեկառի հետևառքը փոխառու-կապատավուտի համար զուտ պլիւս է, նրա ձեռքում եղած գումարի աճում: Ծնոր-հիւ վարկի նա վերջիվերջոյ ստացաւ մի որոշ գումար հարստութիւն, որ որոշ արժէք է ներկայացնում, ըստալով դրա փոխարէն էքվիվալէնս (մի որոշ արժէքի քանակութիւնը չափող ուրիշ էքվիվալէնս) (մի որոշ արժէքի քանակութիւնը չափող ուրիշ արժէք. ծ. թ.). իսկ երբ փոխառուից փող է վերցնում մի ոչ կապիտալիստական արտադրող, այդ դէպքում նա փոխ առած կապիտալիստական արտադրող է ստանում և մի կապատավուտական վաստակ չի ստանում և փոխառուին «բաժին» տալու ոչինչ չունի. փոխառութեան տուկուները նրա համար ներկայանում են իրեն ուղղակի պակասեցում, մինուս նրա տնտեսութեան մէջ. շնորհիւ վարկի (փոխառութեան) նա վերջիվերջոյ տալիս է արժէքի մի որոշ գումար, ոչ ոքից համապատասխան էքվիվալէնսը վերցնելով: Այսպիսով, փոխառուկապիտալիստը վերջում մի բան ստանում է, ոչինչ չը տալով, իսկ ոչ կապիտալիստական փոխառուն մի բան տալիս է, ոչինչ չտանելով¹⁾: Այստեղից են մի կողմից բուրժուական ներբողները կապիտալիստական վարկին, իսկ միւս կողմից՝ ժողովրդական անէծքները վաշխառութեան հասցէին: «Մէկի և միւսի միջև ընկած է երկու հասարակական արտադրութեան և նրանց համապատասխանող հասարակական կարգերի տարբերութիւնը»²⁾:

Այսպիսով, ծեւկ արտաքին նմանութեան տակ թագնւած է ոչ միայն տարբերութիւնը, այլև հակասութիւնը սօցիալական փոխադրձ յարաբերութեան էութեան:

Կատարելապէս նոյն բանն ենք տեսնում նաև հողի կապալով վերցնելու դէպքում: Երբ մենք ունենք էապէս-կապիտալիստական յարաբերութիւն, յարաբերութիւն հողատիրոջ և կապիտալիստ-ֆերմէրի (ագարակագործ), ապա կապալավարձի մեծութիւնը չափուում է մօտաւորապէս բէնտայով: Իսկ եթէ կապալառու է մի ոչ կապիտալիստական արտադրող, ապա կապալավարձի մէջ գտնում ենք նոր կարեսը տարբեր: «Բէնտան, ասում է Մարքսը «Misère de la philosophie»-ում, հողատիրոջ դիմաց կանգնեցնում է... արդիւնաբերող կապիտալիստին, որը հողից եկամուտ է հանում վարձու բանտորների աշխատանքի միջոցով և հողատիրոջը տալիս է երբեք կապալավարձ միայն արտադրութիւնը կապիտալիստական արտադրութեան միջոցով»:

¹⁾ «Կապիտալ» հատ. III, եր. 516.

դրութեան ծախսերից աւելացածը, արտադրութեան ծախսերի մէջ հաշելով նաև կապիտալի վաստակը: Դարձեալ, այս գործառնութիւնը կապալառուի համար վերջանում է նրա կարողութեան աճումով՝ առանց նրա կողմից համապատասխան աշխատանք ծախսւելուն, և նա միայն հողատիրոջը բաժին է հանում մի որոշ մասը ստացած յաւելեալ արժէքի, ուրիշ մարդկանց չըվճարած աշխատանքի: Այլ բան է մանր աշխատաւոր գիւղացիութեան ոչ կալիտալիստական կապալի գէպօւմ: Բաւական չէ, որ հողի համար վճառումները պակասեցումներ են սեփական, իր մէջըով ձեռք բերած գիւղացիական հարստութիւններից, պակասեցումներ, որոնք ոչ մի տեղից չեն լրացւում, վճարման մեծութիւնն իսկ շատ է անցնում զուա բէնտայի սահմաններից: «Այս, ինչ որ նա վճառում է կապալի ձեռվ, ոչ միայն յաճախ կլանում է նրա վաստակի մը մասը, այսինքն նրա սեփական յաւելեալ աշխատանքի մի մասը, որի վրա նա իրաւումք ունի իբրև սեփական աշխատանքի գործիքների տէր, այլ և մի մասը նօրմալ աշխատավարձի, որը նա այլ պայմաններում կստանար նոյն քանակութեամբ աշխատանքի համար» 1):

Այսպէս է մեր «բռապատիկ ունեոր», թէկ մանր բուժուայի կերպանափոխութիւնը: Մինչ թէ շատ ուշադիր վերլուծութիւնը՝ նա մեր առաջ կանգնած էր իբրև եռամի մի էակ.—րէնտայի, կապիտալիստական վաստակի և աշխատավարձի սեփականատէր: Բաւական էր ձեռք առնել գիտական վերլուծութիւնը — և վերջիվերջոյ մեր «բռուժուան» յայտնում է մեզ մի մարդի կերպարանքով, որը զրկած է մինչև անդամնօրմալ աշխատավարձից...»

Այսինչ մեր վերլուծութիւնը գեռ չի վերջացած: Մենք քըննեցինք երկու տիպիք տնտեսական գործառնութիւն, որոնք առանձնապէս մօտիկից շօշափում են գիւղացւուն, և գտանք որ նրա մասնակցութեամբ այս դործառնութիւնները բոլորովին փոխում են իրենց սօցիալական նշանակութիւնը, համեմատած այն բանի հետ, ինչ որ նրանք ներկայացնում են, երբ նրանց մէջ բոլոր գործող անձերը կապիտալիստներ են: Նման է միայն արտաքինը. այդ զանազանութիւնը կարող են չընկատել միայն այն սարդիկ, որոնք վուղար մակերեսութահայեցքից այն կողմը չեն գնում:

Բայց նոյն բանը ճիշտ է զուրս գալիս նաև գիւղացու շատ

ուրիշ տնտեսական յարաբերութիւնների համար, —իսկ առանձ նապէս ոռւս գիւղացու:

Վերցնենք թէկուզ առուծածախը: Ապրանքների փոխանակութիւնը, առում է քաղաքատնտեսութիւնը, էքվիվալէնտների փոխանակութիւն է: Հաւասար արժէք՝ հաւասար արժէքի համար: Եւ այդ գրութիւնը ճիշտ է, երբ փոխանակութեան մասնակիցները հաւասարագօր են: Առանձին ինքնուրոյն արտադրողներ, կապականական կութիւնը մէջ բաժանելով աշխատանքը, ապրանքների փոխանակութիւնը աշխատանքում է գործած միւսի համար միջին հաշելով միատեսակ աշխատանք գործած լինելով: Զանազան ճիշտերի առանձին կապիտալիստներ աշխատանքը մասնակելիս յետ են ստանում իրենց աշխատը, ապրանքներ փոխանակելիս յետ են ստանում իրավունք գործած կապիտալիստները: Վյա հարցին բաւական և սովորական գիւղացի—հողագործը: Այս հարցին բաւականը և գարնանային գների զանազանութիւնը, իսկ երկրորդը, նային և գարնանային գների զանազանութիւնը, իսկ երեսեների ոռւս մուժիկի մի շարք բնորոշ ասացւածքները, հետեւեանքների պէս: — «Գարդ մի անիր, մայրիկ—հաճարիկ, որ ճանապարհութիւնի նում է քաղաք՝ գարնանը աւելորդը ըգճարեմ և յետ կըքերեմ», «մի ողբա վարսակ, որ Մօսկուա տարայ, յետոյ եռապատիկ թանգ գիւղացարեմ և տուն կըքերազարձնեմ»... Ինչպէս տեսնում էք, գիւղացարեմ չափու կարող առաջ նրան հօլա գնալ, զացին հացը ծախում է, թէկ չի կարող առաջ նրան հօլա գնալ, ստիպւած պիտի լինի նորից գնել: Վաճառումը այստեղ ստիպւած պիտի լինի նորից գնել: Կրում. նրա նպատակն է փող ժամանակաւոր բնաւորութիւն է կրում. նրա նպատակն է փող ժամանակաւոր լինելը փոխառուի համար ապահովւած չէ: Այսպէս այսպէս ոչ թէ աշխատանքի բաժանումի առաջ բերած փոխական ու թէ աշխատանքի բաժանումի առաջ բերած՝ մեծ, սակութիւնն է, այլ փողի փոխառութեան մի առանձին տեսակը՝ մեծ, տոկուններով: Հացը, որ վերապառնում է մուժիկի մօտ, շատ մեծ, տոկուններով: Հացը, որ վերապառնում է մուժիկի մօտ, մի տեսակ գրաւ գրած իրի գեր է խաղում, միենոյն ժամանակ, մի տեսակ գրաւ գրած իրի գրային գործառնութիւններից: Գրաւի պահպանած լինելը փոխառուի համար ապահովւած չէ:

Այսպիսով, այստեղ էլ էքվիվալէնտների փոխանակութեան սովորական բուրժուական, յարաբերութիւնները, մուժիկի վերաբերմաք գործադրուելիս, փոխում է իր տնտեսական իմաստը և «զանում է իր հակագրութիւնը» պայմանագիրներից մինի օգտեւլը միւսի չգճարւած աշխատանքից:

Վերցնենք սուսական տնտեսական իրականութեան համար դարձեալ մի տիպիքական յարաբերութիւն, վարձելու պայմանագրութիւնը: Մեզանաւմ մեծ չափով տարածւած է ձիով աշխատելու համար վարձելը: Սևահողի նահանգներից մեծ մասում մենք ունենք մի ամբողջ շարք կալւածատիրական տնտեսութիւններ, որոնք իրենց սեփական անասուններով, կարգ ու սարքով ապահովւած չեն: Մի քանի նահանգներում բոլոր աշխատանքների 50 մինչև 75% ը կալւածատիրական տնտեսութիւններում կատարւում է գիւղացիների սարք ու կարգով: Այսպիսով, այստեղ աշխատանքի համար վարձում է ոչ թէ արտադրութեան միջոցների ամրող կեսից, վարձում է այդ ունեցող հողագործը: Թւում է թէ այս տուրեալ բուրժուական քաղաքանտեսութեան բոլոր կանոնների համեմատ պիտի յանդէր էքվիվալէնների փոխանակութեան: Եւ սակայն գիւղացի-հողագործի ընդհանուր դրութիւնը, իբրև ոչ կապիտալիստական արտադրողի, այն կապիտալիստական հասարակութեան մէջ, որտեղ միայն երկու դրութիւններ են հասարաւոր-մուրճ կամ զնդան—բոլորովին այլ հետեւանքի է հասցնում: Ամեն մի մարդ, որ ծանօթ է ոռու գիւղի էկոնօմիկայի ուսումնասիրութիւններին, լաւ գիտէ, օրինակ, թէ ինչ է «ձմերային վարձելը», և ինչպէս է նա ներգործում գիւղացիական աշխատանքի վարձատրութեան վրա. գիտէ և այն առհասարակ իւրատեսակ օրէնքները, որոնցով կանոնադրուում է այդ վարձատրութիւնը: Գիւղացիական ընտանիքի համար դրում աշխատելու վարձելը ունի օժանդակ աշխատանքի նշանակութիւն, և նրա վարձատրութիւնը սահմանուում է ոչ թէ «օրգանիզմի աշխատանքի ուժի վերաբարելու արժէքով», այսինքն գոյութեան միջոցների նւազագոյնով, այլ այն պակասորդով մինչև այդ նւազագոյնը, որին ստեղծում է գիւղացու երկրագործական վաստակածի աղքատիկ քանակը կամ, ուրիշ խօսքով, այն տարբերութեամբ, որը կայ գոյութեան նւազագոյնի և այդ նւազագոյնին չը հասնող գիւղական տնտեսութեան ընդհանուր եկամուտի մէջ:

Մի խօսքով ժամանակակից հասարակութեան մէջ չըկայ մի այնպիսի տեսակի կապիտալ, որի շահագործումից չը տառապէր աշխատաւոր գիւղացիութիւնը: Եւ հողային սեփականութեան մէջ

դրւած կապիտալը, և փոխատուական կապիտալը, և՝ առտադրական կապիտալ—ստեղծում են մի ամեռողջ շարք բարդ տնտեսական յարաբերութիւններ, որոնց հետևանքը այն է, որ գիւղացու չը վարւած աշխատանքը զանազան ճանապարհներով և անթիւ առական միանում է մի ոսկէ հեղեղատի մէջ,—միանում է պլրօլէտարիատի չը վարւած աշխատանքի հետ միասին յաւելեալ արժէքի մի ընդհանուր ազգային ֆօնդի մէջ, որը յետոյ տարածում է ամեն տեսակի և աստիճանի բուրժուանների, կապիտալիստների և տէրերի գրպանները: Բայց կապիտալիստների այս բոլոր տեսակները շահագործում են մուժիկին ոչ միայն իւրաքանչիւրը առանձին, ոչ միայն հատ-հատ, ոչ, նրանք գեռ միջոց են գտնում նրան ժպտով շահագործելու: Եւ այդ միջոցն է ժամանակակից պետութեան մեխանիզմը:

Ժամանակակից պետական մեխանիզմը ինքն արդէն ներկայացնում է մի հսկայական տնտեսական ձեռնարկութիւն: Եւ ինքն ըստ ինքեան հասկանակի է, որ պետական տնտեսութիւնը, որը յաճախ կոչւում է «հասարակական» և մինչև անգամ «ժողովրդական», իսկապէս մի տնտեսութիւն է, կառավարող դաստկարգերի մի տնտեսական¹⁾ ձեռնարկութիւն, և շատ ձեռնուու ձեռնարկութիւն: «Պետութիւնը միշտ հանդիսանում է որոշ ձեր սեփականութեան ներկայացուցիչ կամ թէ սեփականութեան մի ձերերի միացման, համաձայնութեան ներկայացուցիչ: Սրան նումն է բոլոր գաղտնիքը այն գործունէութեան, որ պահանջում է, որ պետութիւնը ինքը տնտեսական ոյժ դառնայ և որ նա ունենայ միջոցներ և օրգաններ հեշտացնելու համար սեփականութեան մի ձեռքից միւսն անցնելը»: ²⁾ Եւ ոռուաց ինքնակալութիւնը, օրինակ, ներկայացնում է մի ընդհարձակ բաժնեդրական ընկերութիւն, որ կառավարում է ահազին պետական կալւածքները և ձեռնարկութիւնները, որը անմիջական կերպով ներկայացնում է կապիտալիստական տնտեսութիւններ վարձու բանուուների, կապալառու-գիւղացիների և այն շահագործութեան ուղղակի և անուղղակի կերպով: Սրան միանում է նոր հսկայական

¹⁾ Մենք ի հարկէ չենք ասում միայն տնտեսական:

²⁾ Antonio Labriola, «Essais sur la conception matérialiste de l'histoire», p. 233.

Չրհանը չը վճարւած աշխատանքը դուրս քաշելու համար, այսինքն յաւելեալ արժէքը՝ տուրքերի, մաքսի, աքցիզի և այն սիստեմի ձեռվ, որոնք իրենց ծանրութեամբ ընկնում են գիլխաւորաբար անմիջական ոչ-կապիտալիստական արտադրողների ուսերին: «Անհատ կապիտալիստները,—ասում է Մարքսը,—շահագործում են գիլղացիութիւնը զրաւառութեան և վաշխառութեան միջոցով, իսկ կապիտալիստների ամբողջ դասակարգը իր ամբողջութեամբ շահագործում է գիլղացիութիւնը պետական տուրքերի ձեռվ: «Մենք գիտենք, թէ ինչպէս որոշ տեղեր բոլոր հարկերի և տուրքերի գումարը աւելի է, քան հողագործական անտեսութեան զուտ եկամուտը և, հետևաբար, վաստօրէն գիլղացուն դարձնում է կէս-մշակ, կէս-ճորտական ծառայ ժամանակակից պետութեան, որը նրան մի պատառ հող է թողնում, որպէսզի նա ինքը իր համար գոյութեան միջոցներ ճարի, և որպէսզի պետական մեխանիզմը պահպանելու համար, նրա տաժանելի աշխատանքի փոխարէն կարիք չը լինի նրան կերպել կամ վարձ տալ:

Ուրեմն եթէ հասարակութեան բաժանումը դասակարգերի սահմանում է ամենից առաջ և ամենից մօտիկ քաշխման պայմաններով, եթէ դասակարգերի հակամարտութիւնը անմիջապէս սահմանում է բնական հակամարտութեամբ, հակառակ համեմատականութեամբ այն եկամուտների տեսակների, որոնցով առըսում են հասարակութեան որոշ խաւերը, ապա հարց է առաջ դալիս, ուրեմն նը դասակարգին մնաք պիտի վերագրենք աշխատաւոր գիլղացիութիւնը: Պէտք է արդեօր մենք նրան: միացնենք բանկիրների, կապիտալիստնախաճեռուղների և այլոց հետ ըրութուազիայի բարձր հասկացողութեան մէջ, թէ ընդհակառէլ, «բանւորական դաստկարգի» (աշխատաւոր դաստկարգ) բարձր հասկացողութեան մէջ: Պրօլետարիատի հետ միասին, որին կապիտալիստական արդիւնաբերութիւնն է ստեղծել: Մենք կարծում ենք, որ այն ամենից յետոյ ինչ որ վերևում առեց, բաւական է միայն այս հարցը դնել, որ պատասխանը ինքն իրան ստացւի:

Պ. Անինի և ուրիշների փորձը գիլղացիութիւնը իրեն բութուազիա պատկերացնել, թէկուզ «մանր և մանրագոյն» բութուազիա, հիմւած է բացառապէս այն բանի վրա, որ դաստկարգի էտական յատկանիշները մոռացւում են և ուշագրութիւնը

զուտ արտաքին և ձեական յատկանիշների վրա է կենդրոնանում: «Ինչպէս տեսնում էք, գիլղացիների շահագործումը միայն իր ձեռվ է տարբերում բանւորների շահագործումից: Թէ սրանց և թէ նրանց շահագործողը միենայն է—կապիտալը»: Ում են պատկանում այս խօսքերը: Սրանք այն մարդու խօսքերն են, ուրին մարքսիստները համարում են իրենց ուսուցիչը, սրանք «ոչ մարքսիստ» Կարլ Մարքսի խօսքերն են:

Բայց գուցէ, պրօլետարիատի շահագործման հակառակ, աշխատաւոր գիլղացիութեան շահագործումը կարող է վերացւել միքանի աննշան կարկատաններով և նորոգումներով հէնց բութուական հասարակութեան սահմաններում: Գուցէ հէնց այդ պատճառով է, որ աշխատաւոր գիլղացիութեան «դասակարգային շահը» չէ զուգադիպում պրօլետարիատի դասակարգային շահին: Գուցէ հէնց այդ պատճառով մեր վկայութիւնը Մարքսից լրիւ չէ»: Աչ, «միայն կապիտալի անկումը կարող է տանել դէպի չէ»: Աչ, «միայն կապիտալիստական գիլղացիութեան բարձրացումը, միայն հակակապիտալիստական պրօլետարական կառավարութիւնը կարող է կոտրել նրա տնտեսական կարիքի և հասարակական գեգրադացիայի ճնշումը»: Եւ այս խօսքերը նոյնպէս պատկանում են ոչ մարքսիստ Կարլ Մարքսին:

Իհարկ է, անհատ գիլղացին բացտորիկ բաղկաւոր պայմաններում, կարող է հարստանալ և «բութուա»-կապիտալիստ դառնալ մինչև անգամ ժամանակակից կազմի սահմաններում: Բայց դա կը լինի մօտաւորապէս նոյնալիսի հազեագիւտ բացառութիւն, ինչպէս և բանւորը, որ գործարանական յերարխիայի աստիճանները բարձրանալով կարող է հասնել մինչև գործարանի կառավարչի պաշտօնը, ապա իր փոքրիկ գործարանը բանալ և յետոյ կապիտալիստների շարքը մտնել: Բութուական բարյագէտաները իհարկ է միշտ ցոյց կըտան այս օրինակները, իբրև մի ապացոյց, որ նարաւոր է ամբողջ պրօլետարիատի և ամբողջ աշխատաւոր գիլղացիութեան համար աշխատասիրութեամբ, ինաւոյութեամբ և խելքով հասնել ժամանակակից հասարակութեան մէջ նախանձելի բարեկեցութեան: Բայց սօցիալիստի համար պարզ է, որ անհատ անձնաւորութիւնների այսպէս հարստանալու հնարաւորութիւնը ենթագրում է նրանց բարձրացումը ի հաջու նախկին վիճակում մնացած մասսայի:

24
ԳՐԱԿԱՆ

Աշխատաւոր գիւղացիութեան շահերը անհամաձայնելի են բուրժուական կարգի հիմքերի հետ: Աշխատաւոր գիւղացիութեան թշնամին կապիտալն է իր բոլոր ձևերով և տեսակներով: Գիւղացին, կ. Մարքսի արտայայտութեամբ, պարզապէս «այնպիսի բանւոր է, որը գեռ ևս չի դարձել փետրած հաւ, այլ ունի իր սեփական աշխատանքի գործիքները»: Սրան հարկաւոր է գեռ աւելացնել, որ նա գեռ «փետրած հաւ» չի ներկայացնում միայն աշխատանքի գործիքներից ինքնորոյնաբար օգտւելու աեսակէտից: Իսկ միւս բոլոր տեսակէտներից նա յիշեցնում է ոչ միայն «փետրած հաւ», այլ նաև յիշեցնում է մի եզր, որից յաջողեցնում են մի քանի կաշի հանել: Այդ պատճառով գիւղացիութեան և պրոլետարիատի փոխադարձ յարաբերութիւնների խնդրում մենք իրաւացի նոր համարում ոչ թէ կառուցկուն, որի կարծիքով դասակարգային տեսակէտից գիւղացին, իբրև այդպիսին, «թշնամաբար է կանդնած» պրոլէտարիատի գիմաց,—այլ Վանդէրվելդին և Լիբկնէխտին, որոնց կարծիքով աշխատաւոր գիւղացիութիւնը ոչ քանակապէս այլ որակապէս, սկզբունքով տարբերում է բուրժուազից, և թէս ձետովէս պրոլէտարիատ չի հանդիսանում, բայց կարող է վերջինիս հետ միանալ «բանւոր գասակարգի», «աշխատաւոր և շահագործող ժողովրդի» բարձրագոյն հասկացողութեան մէջ:

Վ. Զերնով



ՀՀ Ազգային գրադարան



NL0201201

